

# ՄԱՐԶԻԿ

ՀԱՄԱՐ


Մարզիկ

مَجَلَّة رِثَايَّة شَهْرِيَّة  
تصدرها جمعية الهومنتمن بيروت

# marzig

SPORTS MAGAZINE

السنة الثلاثون - العدد السابع - التاسع 30րդ ՏԱՐԻ, 2011, ԹԻԻ 7-9 (349-351) - VOL. XXX N° 7-9



# ՈՒՂԵՐՁ

**Յ**այ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան քոյր մասնաճիւղերի սկաուտական բանակումի սիրելի՛ մասնակիցներ,

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնն իրականացնում է, յիրաւի, պատմական առաքելութիւն՝ իր գործունէութեամբ ուժաւորելով աշխարհասփիւռ հայ սերունդներին, որն արտայայտուում է նրանց ոչ միայն ֆիզիքական, այլեւ՝ մտաւոր ամրութեան զօրացմամբ:

Որպէս այդպիսին՝ այն վերաճել եւ դարձել է համահայկական երեւոյթ, հաւաքականութեան խորհրդանիշ, որը Հայաստանի եւ Սփիւռքի երիտասարդութեանը համախմբում է մէկ ընդհանուր գաղափարի շուրջ, դաստիարակում նրանց ազգայինի, հայկականի նկատմամբ սիրոյ, նախանձախնդրութեան զգացումով, առաջնորդում դէպի Հայրենիքի տիրոյթներ:

Սիրով եւ երախտագիտութեամբ եմ նշում, որ թէ՛ Հայրենիքում, թէ՛ Սփիւռքում բարձր է գնահատուում միութեան նշանակալի ներդրումը հայապահպանութեան, հայ ինքնութեան զօրացման գործում:

Բանակումն այդ հսկայական գործունէութեան

մէկ արտայայտութիւնն է՝ լուսաւոր նախաձեռնութիւնը:

Մաղթանքս է, որ ի դէմս բանակումի մասնակիցների՝ մեր երիտասարդները կարողանան մարզել ոչ միայն իրենց մարմինները, այլեւ՝ միտքը, ճիշդ գնահատեն իրեց ընձեռուած այս հնարաւորութիւնը, քաջ գիտակցեն ու հասկանան, որ մեր ուժը մեր հաւաքական միասնականութեան, մէկ բըռունցք դարձած գործելու պատասխանատուութեան մէջ է:

Թող յատկապէս երիտասարդութեան միջոցով եւ ուժերով հզօրանայ Հայրենիք-Սփիւռք գործակցութեան ազգապահպան կամուրջը, հայապահպանութեան հոգեւոր զարկերակը:

Հայ ինքնութեան ֆիզիքական եւ հոգեւոր զօրացման գործում իր անփոխարինելի դերն ունեցող Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան մաղթում եմ նոր վերելքներ, նոր ակտիւութիւն՝ շարունակելու իր գործունէութիւնը՝ յանուն Մայր Հայրենիքի, յանուն մեր պայծառ ապագայի:

ՍԻՐՈՎ ԵՒ ԱՆԿԵՂԾ ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹԵԱՄԲ՝  
ՀՐԱՆՈՒՇ ՅԱԿՈԲԵԱՆ

## ՇՆՈՐՀԱԴՈՐԱԳԻՐ

Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը ոգեւորութեամբ հետեւեցաւ Չինաստանի մէջ տեղի ունեցած ճատրակի աշխարհի 8րդ խմբային ախոյեանութեան մրցումներուն եւ ուրախութեամբ ակնատես եղաւ Հայաստանի տղոց ազգային հաւաքականին ախոյեանութեան տիրանալուն:

Աշխարհի նշանաւոր երկիրներու ճատրակի խաղացողներուն դէմ հայրենի վարպետներուն արձանագրած նուաճումը հպարտութեամբ դիմաւորուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ ընտանիքին կողմէ: 25 երկիրներու մէջ տարածուած իր 102 մասնաճիւղերով, Հ.Մ.Ը.Մ.ական անդամները, սկաուտներն ու մարզիկները մեծ ուրախութեամբ կը շնորհաւորեն Հայաստանի տղոց ազգային հաւաքականը: Թող նորանոր նուաճումներ ու յաջողութիւններ միշտ արձանագրուին հայոց պատմութեան մէջ:



## ՇՆՈՐՀԱԴՈՐԱԳԻՐԻՆ ԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆ

Թանկագին բարեկամներ, Ամբողջ հոգով շնորհակալութիւն ենք յայտնում աշխարհի շախմատի 8րդ թիմային առաջնութիւնում Հայաստանի պատուիրակների նուաճման կապակցութեամբ ձեր ուղարկած շնորհաւորանքների եւ ջերմ խօսքերի համար: Ձեր շնորհաւորական խօսքը մենք կը գետեղենք «Շախմատային Հայաստան» հանդէսում:

Այո, բոլորս հպարտ ենք Հայաստանի եւ հայ շախմատիստների այս հրաշալի յաջողութեան կապակցութեամբ:


Յուսով ենք, որ ապագայում եւս մեր շախմատիստները իրենց յաղթանակներով կ'ուրախացնեն աշխարհասփիւռ հայութեանը:

Լաւագոյն ցանկութիւններով՝  
ԳԱԳԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ  
Հայաստանի շախմատային  
ֆետերացիայի գլխաւոր քարտուղար  
«Շախմատային Հայաստան»  
հանդէսի գլխաւոր խմբագիր



# Թիւիւն Նիւթերը

**MARZIG** SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN  
 سارزىك مجله رياضية شهرية تصدرها جمعية الهولمتن الرياضى



Մարզական ամսաթերթ  
 Հրատարակութիւն՝ Հ.Ս.Ը.Ս.ի  
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿԱՐՉՈՒԹԵԱՆ  
 30ԴԴ ՏԱՐԻ, 2011, ԹԻՒ 7-9 (349-351)



## Հ.Ս.Ը.Ս.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Իրագործում 3
- Գիրքերու Հետ 5
- Հ.Ս.Ա.Կ.ի Հետ 7
- Անդրադարձ 10
- Մեր Տեսակցութիւնները 12
- Պատմութիւն 15
- Մասնաճիւղէ Մասնաճիւղ 22
- Մեր Կորուստները 34



## ԲԱԺԻՆՆԵՐ

- Հայրենի Մարզաշխարհ 18
- Միջազգային 20
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



ԽՄԲԱԳԻՐ  
 Վիգէն Աւագեան  
 ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍ  
 Սեդա Պէշլեան, Սեւան Նազարեան

«ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ  
 Պատրիկ Կիւլպէնկեան  
 Արօ Մոսիկեան  
 Գօգօ Մկրտիչեան  
 Վահան Համամձեան  
 Տիրան Շահինեան  
 Սալբի ճէճէեան  
 Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ  
 Նազարէթ Պէրպէրեան, Ներսէս Արք.  
 Բախտիկեան, Գէորգ Թորոյեան,  
 Շաղիկ Գէորգեան եւ  
 շրջաններու թղթակիցներ:

Էջադրում - Արշօ Պալեան  
 Գրաշարութիւն - Շողիկ Պոյաձեան  
 Colour Separation - Photogravure Paklayan  
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ  
 Պուրճ Համուտ, Եհնիշեանի Թաղ  
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ  
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117  
 E-mail: marzig@homenetmen.org  
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

## ՑՐՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին  
 հատակաճառի սակն է 3000 Լ.ո.:  
 Տարեկան բաժանորդագրութեան սակ  
 ծղոյուած է 35000 Լ.ո.:  
 Լիբանանէն դուրս թերթին  
 բաժանորդագրութիւնը  
 կը կատարեն Հ.Ս.Ը.Ս.ի Մեկուսի  
 եւ Շրջանային Վարչութիւնները:  
 Թերթը ուղղակի Լիբանանէն  
 կը ստացուի անձնական  
 բաժանորդագրութեամբ  
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան  
 եւ Եւրոպական երկիրներ \$50,  
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):



Ն  
Մ  
Բ  
Ա  
Գ  
Ն  
Ա  
Կ  
Ն  
Ն

## ՄԻՑԵԼՈՒ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ

**Կ**ար ժամանակ, երբ ազգային մեր բոլոր միութիւններուն նման, Զ.Ս.Ը.Մ. եւս մըրցունակ միութիւն էր: Յատկապէս Միջին Արեւելքի մէջ, ուր մարզական կեանքը նոր կը կազմաւորուէր 1940ական, 1950ական եւ 1960ական տարիներուն, Զ.Ս.Ը.Մ.ի Սուրիոյ եւ Լիբանանի մարզական խումբերը ո՛չ միայն լուրջ մրցակիցներ էին տեղական ակումբներու, այլեւ՝ ախոյեանական իրենց տիտղոսներով յաճախ քայլ մըն ալ առջեւ էին անոնցմէ:

Այդ օրերուն, հայերու նման օտարներ եւս կ'ըմբռնէին Զ.Ս.Ը.Մ.ի միջմասնաճիւղային մարզախաղերու տարբեր մրցումները, որոնք իրենց հմայիչ մթնոլորտին հետ մէկտեղ՝ սուր մրցակցութեան, գեղեցիկ խաղարկութեան եւ հպարտալի արդիւնքներու ոգեւորութիւնը կը փոխանցէին ներկաներուն:

Կարելորդ յաղթելն էր, այո՛, ցեղին վերապրումին փաստը տալը, բայց նաեւ՝ որակի եւ մակարդակի հարց կար: Կարելի չէր ու պէտք չէր մրցապայքարէն հեռու մնալ: Հայը տեւական ներկայ պիտի ըլլար մարզական կեանքին մէջ եւ, հակառակ իր ունեցած նուազագոյն յարմարութիւններուն, պիտի տար առաւելագոյնը, լաւագո՛յնը եւ կատարելագո՛յնը: Կ'արժէ անգամ մը աչքէ անցընել այդ ոսկեայ տարիներու Սուրիոյ եւ Լիբանանի մարզական հաւաքականներու կազմերը, տեսնելու համար, թէ քանի՛-քանի՛ Զ.Ս.Ը.Մ.ականներ իրենց պատուաւոր տեղը ունեցած են անոնց մէջ: Միջազգային մրցաշարքերու մարզական պատուիրակութիւններ յաճախ Զ.Ս.Ը.Մ.ականներէ միայն կազմուած են, արդար հպարտութիւն ներշնչելով բոլորին:

Այսօր, փոխուած է կեանքը: Փոխուած են խաղին օրէնքները: Մրցակցութեան դաշտը նեղցած է այլեւս: Տեղական ախոյեանութիւններու մէջ, Զ.Ս.Ը.Մ.ական խումբեր կը մրցին երկրոր-

դական եւ երրորդական դասակարգերու մէջ: Անհատական մրցումներու պարագային՝ հայկական նուաճումները նուազած են, իսկ եթէ կան՝ յաճախ... օտար ակումբներու դրօշին տակ: Միակ մխիթարանքը մնացած է ներքին մրցակցութիւնը՝ միջ-մասնաճիւղային թէ համահայկական բնոյթի, ուր սակայն ազգային մտահոգութիւնն է գերակշիռը եւ ոչ՝ մարզականը: Մակարդակ, որակ եւ մրցունակութիւն իրենց տեղը զիջած են «կարելորդ քով-քովի ըլլալու», «քանի մը օր հայերէն լսելու եւ խօսելու» մտահոգութիւններուն:

Անկասկած, յիշեալ մտահոգութիւնները ունին արդարացիութեան իրենց բաժինը, սակայն մարմնակրթական միութիւն մը չի կրնար բաւարարուիլ միայն անոնցմով: Հայ պատանիները մեր շուրջը համախմբելու չափ՝ կարելորդ է զանոնք մարզական բարձրորակ խումբերու մէջ պահելն ու մեծցնելը: Նոր սերունդը, վերջին հաշուով, միայն հայկականութիւն չի փնտռեր այսօրւան մարզական միութիւններուն մէջ, այլ նաեւ՝ մրցելու եւ յաղթելու հպարտութիւն:

«Լաւ վաճառորդ ըլլալու համար հարկ է լաւ ապրանք ունենալ», կ'ըսէ ժողովրդային տրամաբանութիւնը: Յանցաւորը նոր սերունդը չէ անպայման, որ հեռու կը մնայ մարզական մեր շարժումէն, մենք մրցունակ ի՞նչ ունինք տալիք արդեօք 21րդ դարու պահանջներով հասակ նետող մեր տղոց ու աղջիկներուն: Խրատներն ու բարոյախօսութիւնները յաղթանակներ չեն կրնար ապահովել մարզական ուսման, թեքնիքներու կատարելագործման եւ խստապահանջ աշխատանքի մեր օրերուն: Օտարներու օրինակը ա՛յդ կը թելադրէ:

Իսկ ինչո՞ւ չօգտուիլ օտարներէն, երբ այս անգամ անոնք երկո՛ւ քայլ առջեւ են մեզմէ:



ՄԱՍԼՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ ԲԱՑՈՒՄԸ ԿԱՏԱՐՈՒԵՑԱԲ  
 «ՀԱՅԿ ՅՈՎԱՆՔԵԱՆ»  
 ՄԿԱՈՒՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՎԱՅՐԻՆ

**11** Յուլիս 2011ին, Երեւանի մէջ բացումը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի երկարամեայ նուիրեալ գործիչ՝ Հայկ Յովսէփեանի անունը կրող սկաուտական բանակավայրին:

Աւելի քան տարիէ մը ի վեր, Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան որոշումով, մայրաքաղաքի էրեբունի համայնքին մէջ գտնուող այս գողտրիկ հողատարածքը տրամադրուած է Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ին՝ հոն «Հայկ Յովսէփեան» սկաուտական բանակավայրը կառուցելու համար: Այս բանակավայրին հիմնադրումը կարելի դարձաւ Յովսէփեան ընտանիքի նիւթական օժանդակութեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի կեդրո-

նական վարչութեան հետեւողական ճիգերուն շնորհիւ:

Արժանաւոր Հ.Մ.Ը.Մ-ականին անունը կրող բանակավայրին բացումը յատկանշուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի քոյր մասնաճիւղերու



բանակումով, որուն մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ-ի Հայաստանի եւ Միացեալ Նահանգներու, ինչպէս նաեւ Իրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան սկաուտները:



«Հայկ Յովսէփեան» բանակավայրի կարմիր ժապավէնը կտրելու եւ անուանակոչութեան տախտակի բացման պաշտօնական արարողութեան ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ.

Յարութիւն Յարութիւնեան, Հ.Յ.Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի ներկայացուցիչ Արմէն Ռուստամեան, Հ.Մ.Ը.Մ.- Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան ատենապետ եղբ. Բագրատ Եսայեան, Համաշխարհային Սկաուտական Շարժման Եւրասիոյ շրջանի տնօրէն Եուրի Եմիլիան եւ Սփիւռքի նախարարութեան անձնակազմի ղեկավար Ֆիրտուս Զաքարեան:

Այս առիթով օրհնութեան խօսք ուղղեց Արարատեան հայրապետական թեմի ներկայացուցիչ Զգօն Քհնյ. Աբրահամեան:

Արմէն Ռուստամեան ողջունեց եւ շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.- Հ.Ա.Ս.Կ-ը՝

իրենց գործակցութեան եւ իրագործումներուն մար:

Եղբ. Յարութիւն Յարութիւնեան Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անունով ողջունեց եւ շնորհաւորեց բոլոր ներկաները եւ Յովսէփեան ընտանիքը:

Ապա խօսք առնելով՝ եղբ. Բագրատ Եսայեան նշեց, որ միացեալ ճիգերով ձեռք բերած այս բանակավայրը տարիներով պիտի ծառայէ Հ.Մ.Ը.Մ-ի թէ՛ Հայաստանի եւ թէ՛ աշխարհասփիւռ մաս-

նաճիւղերու սկաուտներուն՝ դառնալով անոնց հանդիպման եւ գործունէութեան մնայուն օճախը:

Բոլոր ելոյթ ունեցողները շնորհաւորանքի եւ բարեմաղթութեան խօսքեր ուղղեցին Յովսէփեան ընտանիքին եւ Հայկ Յովսէփեանի ընկերներուն՝ անոնց կատարած աշխատանքին եւ նիւթական օժանդակութեան համար:

**Յ.Մ.Ը.Մ.Ի  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

**Elegance Plus**  
Shoes, Bags, Fashion Accessories & Gift Items

Bourj Hammoud - Dora - Armenia Street - Boyadjian Bldg.  
Beirut - Lebanon  
Tel. : 00961-1-248554, Fax : 00961-1-248556  
Mob.: 00961-3-882811 - 00961-3-882812  
E-mail: hratch@goldenmountains.com  
hratchboy@hotmail.com

**H. N. BOYADJIAN & CO.**

«ՄԱՐԶԻԿ»Ի ԵՒ «ԱԶԴԱԿ»Ի ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ՝

# «ՀԱՅԿԱԿԱՆ ՍՊՈՐՏԸ ԵՒ ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅԱՐՈՒԹԻՒՆՈՒՄ»

## ԳԻՐՔԻ ՇՆՈՐՀԱՀԱՆԴԷՍ՝ ՊԷՅՐՈՒԹԻ ՄԷՋ

**Հ**ամահայկական առաջին մարզախաղերու 100ամեակին, հայ մարզական առաջին թերթի՝ «Մարզաշխարհ»ի 100ամեակին եւ Հ.Մ.Ը.Մ-ի գաղափարախօս Շաւարշ Քրիսեանի ծննդեան 125ամեակին առիթով, «Մարզիկ»ի եւ «Ազդակ»ի միացեալ նախաձեռնութեամբ, Հինգշաբթի, 14 Յունիս 2011ի երեկոյեան, «Ազդակ»ի «Փիւնիկ» սրահին մէջ տեղի ունեցաւ «Հայկական սպորտը եւ մարմնակրթութիւնը Օսմանեան կայսրութիւնում» գիրքին շնորհահանդէսը, ներկայութեամբ Լիբանանի մօտ Հայաստանի դեսպան Աշոտ Քոչարեանի, դեսպանատան առաջին քարտուղար Վարդան Աղամեանի, «Փիւնիկ» մարզկային պաշարներու զարգացման համահայկական հիմնադրամի նախագահ Գաբրիէլ Զէմպէրճիի, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական

Վարչութեան եւ Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամներու, մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ-ականներու եւ գրասէր հայորդիներու:

Հանդիսութեան բացման խօսքը արտասանեց եւ շնորհահանդէսի արժանացող գիրքն ու հեղինակը ներկայացուց «Մարզիկ»ի խմբագիր եղբ. Վիգէն Աւագեան: Ան ըսաւ, որ 2009ին, Հայկ Դեմոյեանի հեղինակութեամբ լոյս տեսած գիրքը ունի մենագրական ալպոմի բնոյթ եւ կ'արժարժէ հայ կեանքի 1906-1922 տարիներու հետաքրքրական եւ գրեթէ անծանօթ մէկ երեսը՝ հայ մարզաշխարհի եւ մարմնակրթութեան պատմութիւնը: Գիրքը իր տեսակին մէջ նորութիւն է յատկապէս հայրենի ընթերցողին համար: Գիրքին պատրաստութեան համար օգտագործուած են բազմատասնեակ աղբիւրներ (մեծ մասը հազուագիւտ մենագրութիւններ, յօդուածներ ու թերթեր), որոնց կարգին՝ Հ.Մ.Ը.Մ-ական առաջին սերունդի մարզիկ, սկաուտապետ եւ լուսանկարիչ Գրիգոր Զոյրլեանի լուսանկարները, վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ-ական եղբ. Բիւզանդ Թորիկեանի «Պատմութիւն Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան» աշխատասիրութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոն-



նական Վարչութեան Պէյրութի արխիւները:

Եղբ. Աւագեան գիրքին տարբեր բաժինները ներկայացնելով յայտնեց, որ Դեմոյեանի մենագրութիւնը իր շօշափած նիւթով կը ներկայացնէ արեւմտահայութեան նախաեղեռնեան եռուկեանքին մէկ շրջանը, ուր մարզանքը սովորական հաճոյքէ եւ ժամանցէ անդին կը դառնայ միջոց՝ նոր սերունդը ազգային-քաղաքացիական գիտակցութեան առաջնորդելու: Ան աւելցուց, որ գիրքը միաժամանակ լուրջ փորձ մը կը կատարէ հայրենի հայութեան ներկայացնելու հայ մարզական շարժումի եւ սկաուտութեան ծնունդը եւ անոնց մէջ Հ.Մ.Ը.Մ-ի դերն ու առաքելութիւնը:

Իր խօսքին մէջ, եղբ. Աւագեան



յայտնեց, որ Դեմոյեանի գիրքին ի յայտ կու գայ, որ Հ.Մ.Ը.Մ-ի ստեղծումը սոսկ գաղափար մը չէր միայն եւ չէր սահմանափակուած գուտ մարմնակրթական խնդիրներով, այլ՝ կոչուած էր լուծելու համահայկական ընդհանրութեան գաղափարը, նեցուկ կանգնելու համար հայ ազգի հաւաքականութեան:

Եղբ. Աւագեան դիտել տուաւ, որ Դեմոյեան իր նիւթը չի ներկայացնել մարզական պատմութեան նեղ դիտանկիւնէն, այլ՝ գայն կը տեղադրէ նախաեղեռնեան շրջանի հայ-թուրք յարաբերութիւններու շրջագիծին մէջ եւ, առ այդ, հայոց յառաջատար եւ գերակայ ըլլալը ներկայացնելով, կը փորձէ հայերու հանդէպ թուրքերու անհանդուրժողական տրամադրութիւններուն բացատրութիւնը գտնել եւ հայ-թուրք ազգային մրցակցութեան մէկ դրսեւորումը ներկայացնել:

Իր խօսքին աւարտին, եղբ. Աւագեան շեշտեց, որ մարզական իմաստով, Դեմոյեանի գիրքը լուսարձակի տակ կ'առնէ ուշագրաւ տուեալներ, նորութիւններ, ընդգծելով հայութեան ունեցած մեծ դերն ու ներդրումը թրքական մարզական կեանքի եւ մարմնակրթութեան զարգացման մէջ:

Այնուհետեւ խօսք առաւ գիրքի հեղինակ եւ Հայկական Յեղասպանութեան թանգարան-հիմնարկի տնօրէն Հայկ Դեմոյեան: Ան ներկայացուց գիրքին հրատարակութեան դրդապատճառները եւ գուգահեռներ գծեց «Մարգաշխարհ»-ի եւ իր գիրքին ստեղծման պայմաններուն միջեւ: Ան ըսաւ, որ 100

տարի առաջ «Մարգաշխարհ»-ի գաղափարը կը ծնէր դեղարանի մը մէջ (Պոլիս), իսկ մօտաւորապէս 100 տարի ետք, այս գիրքին արխիւներուն եւ լուսանրկարներուն կարելոր մէկ բաժինը ի յայտ կու գար դարձեալ դեղարանի մը մէջ (Գրիգոր Զուլյեանի գաւկին՝ Փաթրիքի Փարիզի դեղարանի պահեստանոցին մէջ):

Դեմոյեան յայտնեց, որ իր պրպրտումներէն երեւան եկած է, որ 19րդ դարու վերջը եւ 20րդ դարու սկիզբը հայութիւնը լայնօրէն հետաքրքրուած է մարմնամարզով եւ մեծ կարելորութիւն ընծայած է անոր, որովհետեւ հաւատացած է որ առողջ մարդ եւ առողջ սերունդ կարելի է ստեղծել միայն այդ ձեւով: Ան նշեց, որ թուրքերու համար նեղացուցիչ երեւոյթներ էին հայութեան արձանագրած յաջողութիւնները մարզական կեանքին մէջ: Այս իմաստով ան յիշեց Սթոքհոլմի ողիմպիական խաղերուն հայերու մասնակցութեան առիթով ծագած հայ-թուրք բանավէճը (1912) եւ Շաւարշ Քրիսեանի պատասխանը թրքական ողիմպիական կոմիտէի մէկ ներկայացուցիչին, թէ՛ «Երբ կոտորածի առիթ ըլլայ կը յիշէք որ հայեր ենք, իսկ երբ օսմանեան հայրենիքը ներկայացնենք եւ լաւ բան մը ընենք՝ այդ ժամանակ մեզի օսմանցի կը նկատէք եւ մեր հայ ըլլալը կը մոռնաք»:

Շարունակելով, Դեմոյեան հաստատեց, որ թրքական մարզական կեանքն ու թրքական ազգայնականութիւնը երկուրեակներ են, այդ պատճառով ալ թուրքեր դժուար թէ ընդունին, որ Օս-

մանեան կայսրութեան շրջանին մարզական կարգ մը յաջողութիւններու ետին հայեր կանգնած ըլլան: Ան ըսաւ, որ հակառակ հերքումի եւ ուրացումի տասնամեակներու քաղաքականութեան, այսօր փորձեր կը կատարուին, որպէսզի թուրքեր վերատեսութեան ենթարկեն իրենց մարզական պատմութիւնը եւ ցարդ անտեսուած հայկական տուեալները ներառեն անոր մէջ: Ան ըսաւ, որ թրքական մարզական կեանքին մէջ դերակատար եղած ըլլալու հանգամանքը հոգեբանական գէնք մըն է թուրքերուն դէմ պայքարելու, անոնց կեղծիքները բացայայտելու եւ ճշմարտութիւնները աշխարհին ներկայացնելու համար: Այս ուղղութեամբ ան շեշտեց թրքական լսարանին հասնելու անհրաժեշտութիւնը:

Իր խօսքին աւարտին, Դեմոյեան յայտնեց, որ «Հայկական սպորտը եւ մարմնակրթութիւնը Օսմանեան կայսրութիւնում» գիրքը կարելոր էջ մը կը բանայ հայ մարզական պատմութեան մէջ եւ լուրջ հրաւեր կ'ուղղէ թուրք մարզական շրջանակներուն իրենց մարզական պատմութիւնը վերանայելու, վերաթարմացնելու եւ վերստին գրելու:

Խօսքերէն ետք, ներկաներու հարցումներուն տրուած պատասխաններու ճամբով յաւելեալ տեղեկութիւններ փոխանցուեցան գիրքին բովանդակութեան եւ նորութիւններուն մասին: Այնուհետեւ, հեղինակը մակագրեց գիրքին վաճառքի դրուած օրինակները, որոնք սպառեցան տեղւոյն վրայ:

Յաջորդեց հիւրասիրութիւն:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ՝

# «Հ.Մ.Ա.Կ.Ը ԻՐ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԷՋ ՄԵԾ ՅԱԶՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ»

- ԵՍ ՊԻՏԻ ՓԱՓԱՔԷԻ, ՈՐ ՍԿԱՈՒՏՆԵՐԸ ԳՈՆԷ ԹՈՒՈՎ ՀԱՄԱՀԱԻԱՍԱՐ ԼԻՆԷԻՆ  
- ԳՈՆԷ ԻՄ ՊԱՇՏՕՆԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՂԵԼ ԵՆ  
ՇԱՏ ՍԻՐԱԼԻՐ ԵՒ ՓՈԽԱԴԱՐՁԱԲԱՐ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ ԵՆՔ ՈՒՆԵՑԵԼ

**Թ**ԵՏՐԱՆՈՒՄ ԿԱ-  
ԵՅԳԱԼ ՀԱՅ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
«ԱՐԱՐԱՏ»  
ԿԱԳՄԱԿԵՐ-  
ԱՊՈՒԹԵԱՆ 40րդ ՆՍՏՈՂՉՐՋԱՆԻ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
24րդ ՊԱՏՉԱՄԱԼՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ-  
ՎՐ, ՈՐԻՆ ՈՐԱՅՍ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱ-  
ԱՅԵՐԻ ԸՆԴՂԱՅՆՈՒՄ՝ ԻՐ ԱՌԱՆՃԻՆ  
ԵԼՈՅԹՈՎ ՆԵՐԿԱՅ ՀՐ ՆԱԵԼ Հ.Մ.-  
Ը.Մ.Ի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒ-  
ԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԳՐԻԳՈՐԻՍ ՊՈ-  
ՂԱՐԵԱՆՐ:



Իրանի Հայ Մշակութային «Արա-  
րատ» Կազմակերպության 24րդ  
Պատգամաւորական ժողովին մաս-  
նակցութեան համար, վերջերս,  
Թեհրան այցելեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրո-  
նական Վարչութեան ատենապետ  
եղբ. Գրիգորիս Պողարեան:

Պատեհ առիթէն օգտուելով,  
Հ.Մ.Ա.Կ.ի «Լուրեր Արարատից»  
թերթը եղբ. Պողարեանի հետ կա-  
տարեց հարցազրոյց մը՝ Հ.Մ.Ա.Կ.ը  
եւ Հ.Մ.Ը.Մ.ը յուզող նիւթերու շուրջ:  
Ստորեւ՝ այդ հարցազրոյցը:

Օգտուելով իր ներկայութեան  
առիթից՝ հարցազրոյց ունեցանք  
նրա հետ՝ տարբեր խնդիրներ քննարկելու նպատակով, որը  
տալիս ենք ամբողջութեամբ:

Նա Պատգամաւորական ժողովից ունեցած իր տպաւորու-  
թիւնները մասին ասաց. «Սա իմ երկրորդ փորձառութիւնն է:  
Առաջին տպաւորութիւնները դրական էին, իսկ սա եկաւ  
աւելի ամրապնդելու իմ ունեցած տպաւորութիւնները»:

«Շատ յստակ էր, որ մասնակիցները զանազան շրջաննե-  
րից եկած իրազեկ են կազմակերպութեան վիճակի մասին, հե-  
տաքրքրուած են եւ ուղղակի բարելաւելու եւ յառաջխաղաց-  
քի համար են խնդիրներ արժարժում, եւ սա շատ ուրախալի  
է»:

«Նաեւ մի ուրիշ բան, որ ինձ համար անսպասելի էր, մաս-  
նակցողների եւ կազմակերպութեան անդամների թիւն էր, որ  
հակառակ իմ պատկերացումներին, որ ստացել էի նախկին  
շրջանից, բարեբախտաբար, թուի նուազում չկար, այլ աւե-  
լացել է թիւը: Նկատի առնելով իրանահայ համայնքի մէկ մա-  
սի արտագաղթը եւ տնտեսական վիճակը՝ սա շատ դրական  
երեւոյթ է»:

«Ընդհանուր առմամբ՝ ժողովների դրական կողմերից  
մէկն էլ այն էր, որ իւրաքանչիւր մասնակցող իր տեսակէտով  
մաս էր կազմում քննարկուող բոլոր նիւթերի քննարկման, եւ

սա նորից շատ դրական երեւոյթ է»:

Պատասխանելով այն հարցումին թէ՛ մեր համայնքին իւ-  
րայատուկ որեւէ արժարժուած խնդիր նկատե՞ց ինքը, ասաց.  
«Հաւանաբար, աշխատելու ձեւը իւրայատուկ է, որովհետեւ  
Սփիւռքի միւս համայնքներում, որտեղ Հ.Մ.Ը.Մ. գոյութիւն  
ունի, աշխատանքի բաժանում կայ: Մարզականն ու սկաու-  
տականը Հ.Մ.Ը.Մ.ն է ստանձնում, իսկ մշակութայինը առա-  
ւելաբար Համազգայինի աշխատանքների մէջ է ներառուած,  
իսկ այստեղ Հ.Մ.Ա.Կ.ը այս բոլոր աշխատանքները միասին  
ինքը միայնակ է կատարում»:

«Ինչ որ ժողովի ընթացքում ես մատնանշեցի, իմ փափաքն  
է, որ աւելի շատ ուժ տրուի սկաուտական աշխատանքներին,  
որովհետեւ մեր փորձառութեամբ, որ ձեռք ենք բերել  
Սփիւռքի զանազան համայնքներում, նրանք, ովքեր անցնում  
են սկաուտական բովից, ընդհանրապէս շատ աւելի կարգա-  
պահ են, կազմակերպութեան զանազան աշխատանքների  
աւելի լաւատեղեակ են կազմակերպչական իմաստով, եւ  
ապագայում կարող են յաջող դեկավարներ դառնալ: Այդ  
պատճառով էլ՝ խնդրեցի, որ աւելի ուժ տրուի սկաուտական  
աշխատանքներին եւ աշխատանք տարուի՝ փոքրերին մանուկ  
տարիքից ներգրաւելու սկաուտական միութեան մէջ»:

«Ես նկատեցի, որ մարզական աշխատանքներով զբաղող միութենականները կազմում են կազմակերպութեան անդամների 50 տոկոսը: Ես պիտի փափաքեի, որ ըսկառուտները եթէ աւելի թիւ չկազմէին, գոնէ համահասարակ լինեն, որովհետեւ նկատելի է նաեւ ամէն տեղ, որ մարզիկներն ընդհանրապէս շատ հետաքրքրուած չեն միութենական կեանքով, իրենց հետաքրքրութիւնը, առաւելաբար, մարզական ասպարէզում է, եւ իրենց ներդրումը կատարում են հէնց իրենց մարզաձեւի մէջ»:



ստանում, եւ ինչ որ յստակ է, ու կարող եմ հետեւցնել Հ.Մ.Լ.Մ.ական շրջաններից, իրանից եկող հայերը կամ սկառուտները, որոնք մասնակցում են Հ.Մ.Լ.Մ.ական բանակումներին, միմիանց հետ հայերէն են խօսում, նոյնպէս եւ իրանահայերը, բայց, օրինակ Հարաւային Ամերիկայից եկած հայերը եւ սկառուտները միմիանց հետ սպաներէն են խօսում, Եւրոպայի մի շարք երկրներից եկողները իրենց երկրի լեզուով են խօսում, եւ սա մի ապացոյց է, որ Հ.Մ.Ա.Կ. իր առաքելութիւնների մէջ մեծ

Ժողովի ընթացքում ներկայացուած վիճակագրական տուեալների մասին Պողարեանն ասաց, որ մօտկից շատ տեղեակ է, բայց ենթադրում է, որ եղածը դրական լինի, սակայն ինչպէս որ իրենք էլ ժողովի ընթացքում արտայայտուեցին, կը շարունակուեն դրանք, եւ հերթական առիթներով կը վերանորոգուեն վիճակագրական տուեալները: «Դժբախտաբար, շատ երկրներում չունենք վիճակագրական տուեալներ, բայց իրանի եւ Լիբանանի նման երկրներում, որտեղ տեղաշարժը յստակ է, արդէն կարիք ունենք այդպիսի վիճակագրութիւնների եւ տուեալների»:

Նկատի ունենալով այն իրողութիւնը, որ ինքը մօտկից տեղեակ է եղել կազմակերպութեան գործունէութեան, դրահօր կամ թերի կողմերի մասին, Գրիգորիս Պողարեանն ասաց. «Իրանի պարագայում՝ շատ յստակ է: Անհատը երբ «Արարատ» կազմակերպութեան սահմաններից ներս է մտնում, իր պատկանելիութեան զգացումը զօրաւոր թափ է

յաջողութիւններ է ձեռք բերել»:

Պողարեանը խոստովանում է, որ առաւելաբար դրական կողմեր է նկատել, քան՝ թերութիւններ, քանի որ ինքը հետաքրքրուած է աւելի շատ դրական կողմերով, բայց միաժամանակ յստակեցնում է, որ իւրաքանչիւր միութիւն, կազմակերպութիւն, որ աշխատում է, բնականաբար, իր թերութիւններն էլ ունի: Բայց, իր ասութեամբ, այստեղ նկատեցի, որ դրական կողմերը աւելի շատ գերիշխում են թերութիւններին:

Հարցնում ենք այն մասին, որ ի բաց առեալ Հ.Մ.Լ.Մ.ի, որ շատ աւելի լայն շրջանակներ ունի Սփիւռքում, ինչպէս է տեսնում Հ.Մ.Ա.Կ.ի գործունէութիւնը: «Ճիշդ է, որ թուական տեսակէտից Հ.Մ.Լ.Մ.ը աւելի մեծ կարող է լինել, բայց ելնելով այն երեւոյթից, որ ուր որ արարատականները մեծաթիւ են, այստեղ նոյնիսկ Հ.Մ.Լ.Մ.ի մէջ իրենց դերը գերակշիռ է միւս անդամներից, կարող եմ ասել, որ «Արարատ»ը իր առաքելութեան մէջ յաջողել է շատ բարձր տոկոսով, եւ փաստը Ամերիկայի համայնքում իր ունեցած դերն է»:



Պողարեանին խնդրում ենք որպէս Հ.Մ.Լ.Մ.ի Կենտրոնական վարչութեան ատենապետ, եւ հէնց նոյն դիտանկիւնից մասնակցելով Հ.Մ.Ա.Կ.ի Պատգամաւորական Ժողովին ու իրազեկ լինելով անցողաբար իր առաջարկները ներկայացնի քոյր միութեանը՝ կազմակերպութեան աշխատանքները աւելի բարելաւելու համար:

«Վստահ չեմ, որ ես կարող եմ այդ առաջարկը ներկայացնել, եւ նոյնիսկ դրա իրաւունքն ունեմ, բայց, ինչպէս սկզբից ասացի, իմ տպաւորութիւնները շատ դրական

էին Հ.Մ.Ա.Կ-ի գործունէութեան կապակցութեամբ: Ես իմ մասնագիտութիւնից ելնելով, որպէս համալսարանի դասախօս, համալսարաններում եւս նկատուում է, որ գուցէ որոշ տեղայնական հաշիւներով հարցեր ստեղծուեն, բայց ընդհանուրի մէջ ասելիք չունենմ»:

Հ.Մ.Ը.Մ-ի Կենտրոնական Վարչութեան ատենապետը մանրամասնելով երեւոյթը ասաց. «Չեմ ուզում որակաւորել, բայց գուցէ խնդիրներ լինեն մարզական, արուեստից եւ կամ միւս միութիւնների միջեւ, երբեմն մանր հաշիւներ կան, փոքր անձնական հակադրութիւններ, որոնք երբեմն խոչորացոյցով են դիտուում. դրանք եթէ ժամանակին չլուծուեն, կարող են խնդիրներ ստեղծել, բայց ընդհանրութեան մէջ որեւէ մատնանշելի ժխտական երեւոյթ չտեսայ»:

Թէ ի՞նչպէս է գնահատում Հ.Մ.Ը.Մ-ի եւ Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան յարաբերութիւնները, ասաց. «Գոնէ իմ պաշտօնավարութեան շրջանում, յարաբերութիւնները եղել են շատ սիրալիր, եւ երբ առիթներ են ստեղծուել, փոխադարձաբար ներկայութիւն ենք ունեցել»:

«Նկատի ունենալով տեղի վիճակը, դժբախտաբար, մի շարք առիթներով որտեղ մարզական ներկայութիւն էինք կարող ունենալ, չկարողացանք մասնակցել, որովհետեւ արտասահմանի մի շարք երկրներ իրենց նիւթական եւ կամ քաղաքական պատճառներով չէին կարող այստեղ ներկայութիւն ունենալ: Բայց հակառակը, երբ պէտք է եղել, լինի համա-Հ.Մ.Ը.Մ-ական մարզական խաղերին կամ սկստական բանակումներին, իրանահայութիւնը եւ ոչ միայն «Արարատ»ը, այլ նաեւ «Նայիրի» եւ «Սիփան» միութիւնները ներկայութիւն եղան, եւ դրա համար շատ շնորհակալ ենք»:

«Յոյսով եմ, որ նորընտիր Կենտրոնական Վարչութեան շրջանում, եւ Հ.Մ.Ը.Մ-ի յաջորդ Կենտրոնական Վարչութեան շրջանում, այս կապերը սերտանան եւ, ինչպէս որ բացման օրն ասացի, այսօր Սփիւռքում հասել ենք մի տեղ, որ իրար հետ աշխատելով, միմիանց ամբողջացնելով է, որ կը կարողանանք հնարաւորի չափ շարունակել մեր առաքելութիւնը»:

Թէ ի՞նչ է «Արարատ»ի եւ Հ.Մ.Ը.Մ-ի նման կազմակերպութիւնների առաքելութիւնը Սփիւռքում ասաց.

«Ինձ համար հիմնականում հայապահպանում եւ հայակերտումն է, դրանից յետոյ, անշուշտ, նոր սերունդներին դաստիարակել այնպէս, որ լինեն յանձնառու քաղաքացիներ՝ իրենց բնակած երկրի համար: Առաւել կարեւորը յանձնառու հայեր դաստիարակելն է: Դժբախտութիւն է, որ շատ երկրներում հայոց դպրոցներում պակասում է հայ աշակերտների թիւը, եւ զգալիօրէն աւելանում է խառն ամուսնութիւնների թիւը: Սրանք բոլորը իրենց ժխտական անդրադարձն են ունենում հայապահպանման վրայ, քանի որ երբ հայ պատանին ու երիտասարդը հայկական դպրոց չեն յաճախում, յաջորդ տեղը, որտեղ կարող են հայկական հոգեւոր սնունդ ստանալ, հայկական ակումբներն ու միութիւններն են»:

«Ուրիշ առիթներով եւս ասել եմ՝ միութիւնների գործը շատ էլ դիւրին չէ: Երբ եկեղեցու եւ դպրոցի հետ գործ ունես, դու ես, որ զաւակիդ եկեղեցի կամ դպրոց ես ուղարկում, բայց միութիւնը եկեղեցու եւ դպրոցի նման չէ: Միութիւնը պէտք է ունենայ այն որ քեզ իր մօտ տանի: Այդ իմաստով՝



«Արդէն գլորեցինք 100-րդը... Եւ մեր առջեւում են դեռ հարիւրաւոր համարներ», կ'ըստ «Լուրեր Արարատից»ի վերջին թիւը, որ կը կրէ 100-րդ համարը:

4 Յուլիս 1995-ին ճամբայ ելած «Լուրեր Արարատից»ը իրանի 66ամեայ Յ.Մ.Ա.Կ.ին պաշտօնաթերթն է, որ կը ծանօթացնէ անոր գործը եւ կը տարածէ անոր խօսքը:

Կազմակերպութեան հարազատ հայելին է ան, պատմութեան շտեմարանը, որ ձեւ-գիծ-գոյն ըլլալէ առաջ՝ ունի իւրայատուկ բովանդակութիւն եւ դիմագիծ: Նիւթերու ճոխութեան հետ մէկտեղ ան հաւատքի խորութիւն մը կ'ամբարտ իր էջերուն մէջ, ինչ որ զինք կը զատորոշէ ընթացիկ մամուլի այլ ներկայացուցիչներէ:

«Լուրեր Արարատից»ի 100-րդ թիւին առիթով, «Մարզիկ» կը շնորհաւորէ թերթին խըմբագրական ու վարչական կազմերը եւ յաջողութիւն կը մաղթ յաջորդ 100 թիւերու անոր միութենանուէր եւ հայանուէր երթին:

«Արարատ»ի ունեցած այս կառոյցը ձգողականութիւն ունի, իսկ ուրիշ տեղեր չունենք այսպիսի ձգողականութիւն: Նոյն-իսկ Հ.Մ.Ը.Մ-ի պարագայում էլ որոշ տեղերում չունենք նման կառոյցներ, հակառակ նրան, որ աշխատում ենք, եւ շատ տեղեր կարող ենք գրաւել երիտասարդին, բերել ակումբ եւ դաստիարակել նրան»:

Շնորհակալութիւն ենք յայտնում Հ.Մ.Ը.Մ-ի Կենտրոնական Վարչութեան ատենապետ Գրիգորիս Պողարեանին, այն ակնկալիքով որ օրըստօրէ սերտանան Հայաստանի եւ Սփիւռքի հայկական համայնքների կազմակերպութիւնների ու ազգային կառոյցների փոխադարձ բարեկամական կապերը:

Նշենք, որ Գրիգորիս Պողարեանը Հ.Մ.Ը.Մ-ի 40րդ նստաշրջանի Կենտրոնական Վարչութեան 24րդ Պատգամաւորական Ժողովին մասնակցելու համար էր թեհրանում գտնուում եւ բոլոր նիստերին մասնակցելուց բացի՝ նաեւ իր ողջոյնի խօսքն ուղղեց ժողովին՝ հէնց բացման օրը:

www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org  
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org  
**www.homenetmen.org**  
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org

# ՄՆՁՆՈՒՒՐՈՒԹԵԱՆ ՄՆՍՊԱՌ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՄՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՆՍԱՎՏՈՒ ՈՒԺԱԿՄՆՈՒԹԻՒՆԸ

Մինչ մեր միութիւնը կը թեւակոխէ իր գոյութեան երկրորդ դարը, մենք Հ.Մ.Ը.Մ.ը կը պատկերացնենք որպէս՝

... Ուժական եւ նորարար կազմակերպութիւն մը, պարզ կառոյցներով եւ ժողովրդավար որոշումներով, ուր կազմակերպութիւն, վարչութիւն եւ հաղորդակցութիւն, ամէն մակարդակի վրայ, կ'ընթանան հեզասահ կերպով:

ՏԵՍԼԱԿԱՆ Հ.Մ.Ը.Մ.Ի - 2020

## Նազարէթ Պերպերեան ԱԹԵՆՔ

Հայ ժողովուրդի մերօրեայ վերանորոգումն ու դարու կշռոյթով վերաշխուժացումը լիարժէք կ'արդիւնաւորուին այն ատեն, երբ ազգային մեր պետականութեամբ եւ հանրային կազմակերպ կառոյցներով կը յաջողինք մշակել ու կիրարկման մէջ դնել, համազգային ընդգրկումով, նպատակասլաց ռազմավարութիւն մը:

Եւ ճիշդ այդ ուղղութեամբ արդէն նկատելի է ընդհանուր շարժում մը հայ իրականութեան մէջ: Ամէնուրեք ակնբախ է համապատասխան ռազմավարական ծրրագրումի մարտահրաւէրը: Նոյնպէս զգալի են, տարբեր մարզերու մէջ եւ ղեկավար մակարդակներու վրայ, ընկալեալ արժէքները, կառոյցները եւ մտայնութիւնները վերանայման ենթարկելու, թէ՛ բարեփոխելու եւ թէ՛ վերահաստատելու գործնական ճիգերը:

Ուշագրաւ է, որ հակառակ հայ քաղաքական մտքի խայտաբղէտ մօտեցումներուն եւ աշխարհահայեացքի տարբերութիւններուն, ընդհանրապէս տիրական է նոր ժամանակները եւ մերօրեայ երիտասարդները հասկնալու, ճանչնալու եւ ինքնակազմակերպման մղելու առաջադրանքը:

Ընդհանուր է նաեւ այն ընկալումը, որուն համաձայն պէտք է խոսսափիլ ծանօթ ընդհանրացումներէն եւ ընդունիլ,

որ շեշտակի բազմատարրութեամբ կը յատկանշուին թէ՛ մեր ապրած ժամանակները, թէ՛ իրենք՝ երիտասարդները:

Ո՛չ 21րդ դարը ինք կ'ընդունի միատարրութիւնը եւ, հակառակ միաբեւեռ աշխարհակարգի պարտադրման նկրտումներուն, ամէն քայլափոխի կը դրսեւորէ բարդ ու բազմատարր ըլլալու խմորումներ:

Ոչ ալ նորահաս սերունդը ինք կը տեղաւորուի մէկ եւ ընդհանուր կաղապարներու մէջ, այլ ընդհակառակն՝ անձնակերպութեան հետ շփոթուելու աստիճան ուրոյն առանձնայատկութիւններով կը դրսեւորէ իր անհատականութիւնը:

Խորքին մէջ հինն ու նորը, հաստատուած արժէքներն ու տակաւին կազմաւորման փուլին զըտնըող նորայայտ նախասիրութիւնները, անվիճելի նկատուած բարոյական սկզբունքները եւ կենսակերպի ուժ հաւաքող աննախատեսելի վարմունքի, յարաբերութեանց ու կապերու զարտուղութիւնները, բոլորը՝ թէ՛ ընկալեալ եւ ընդունելի, թէ՛ անըմբռնելի ու այլասերում մատնող մտայնութիւնները եւ մօտեցումները միատեղ կը կենակցին երիտասարդներու առօրեային ու հոգեկերտուածքին մէջ...

Կը նշանակէ, որ մերօրեայ երիտասարդները իրենց մորթին վրայ կը զգան բազմատարր ու հակասութիւններով՝ պատեհութիւններով եւ սահմանափակումներով ծանրաբեռնուած նոր ժամանակներու ամբողջ ճնշումը եւ կը փնտռեն իրենց սեփական ելքը, մարտահրաւէրները դիմագրաւելու անձնական թէ՛ հաւա-

Ելքը կը գտնուի ազգային-միութենական մեր կառոյցներու ժողովրդավարական վերանորոգման մէջ, որպէսզի նորահաս սերունդներու յանձնառու տարրին նուիրաբերումը զինուի առաւելագոյն մասնակցութեան եւ ներդրումի հնարաւորութիւններ ընձեռող կազմակերպութեամբ:

քական շարժումի ուղին:

Իսկ հայ ժողովուրդի աշխարհաքաղաքական եւ պատմամշակութային բարդ իրականութիւնը աւելիով շեշտելու կու գայ մեր երիտասարդներու ներքին լարւածութիւնը՝ նոր ժամանակներէն եկող որոնումներու եւ ինքնահաստատման ճիգերու ինքնին ճնշող հոգերու բեռը:

Հայ ազգային վերանորոգման ռազմավարական ծրագրումը, հետեւաբար, առաջնահերթ կարեւորութեամբ պէտք է հիմնուի նոր ժամանակներու եւ մերօրեայ երիտասարդներու առանձնայատկութեանց այս բարդ աշխարհին վրայ՝ ըստ այնմ մշակելու համար հաւաքական ու կազմակերպ մեր քայլերն ու նպատակասլաց ուղղութիւնը:

Այդ առումով պարզ ու հասկնալի կը դառնայ, օրինակ, որ ինչո՞ւ համար մեր նորահաս սերունդներուն հայեցի՝ կազմաւորման նուիրուած Հ.Մ.Ը.Մ-ի օրինակով համահայկական կազմակերպութիւն մը, վաղուան իր ընելիքն ու կառոյցը ռազմավարական ծրագրումի ենթարկելու ժամանակ, իր առջեւ կը դնէ Հ.Մ.Ը.Մ-ի 2020 թուականի տեսլականը վերանայման ենթարկելու եւ նորովի սահմանելու օրակարգը:

Նաեւ կ'առաջադրէ, որ իսկապէ՛ս նորարար կազմակերպութիւն ըլլալու համար, Հ.Մ.Ը.Մ-ը պէտք է օժտուի պարզ կառոյցներով ու գործէ ժողովրդավարական որոշումներով, որոնց շնորհիւ միայն կարելի է ապահովել միութեան կազմակերպական կառոյցին, վարչական դեկավարման եւ ներքին հաղորդակցութեան հեզասահ ընթացքն ու արդիւնաւորումը:

Իսկ կազմակերպական կառոյցներու պարզացումը եւ, ժողովրդավարական որոշումներու շնորհիւ, սեփական շարքերու առաւելագոյն մասնակցութեան ապահովումը միայն Հ.Մ.Ը.Մ-ին բնորոշ կամ մասնայատուկ հրամայականներ չեն:

Ազգային՝ պետական թէ հանրային ինքնակազմակերպման ծառայող բոլոր կառոյցներու պարագային առաջնահերթ անհրաժեշտութիւն դարձած են:

Այդպէ՛ս է յատկապէս նորահաս սերունդներուն ինքնակազմակերպման ծառայող հանրային-միութենական մեր կառոյցներուն համար, որոնք ազգային անկախ պետականութեան բացակայութեան պայմաններուն մէջ, մանաւանդ Սփիւռքի տարածքին, կամաւոր ծառայութեան եւ անձնուիրութեան մեծ աւանդ ստեղծեցին: Աւանդ մը, որ սակայն ժամանակի մաշեցնող թաւալքին հետ կազմակերպականօրէն յանգեցաւ սովորամոլութեան գերին դարձած կառոյցներու, որոնց շարքերէն անցնող մանուկներն ու պատանիները, իրենց երիտասարդ ու չափահաս տարիքին անդրադարձան, թէ այլեւս զուրկ են իրենց հարազատ կազմակերպութեան վերանորոգումին ու վերաշխուժացումին գործուն մասնակցութիւն բերելու հնարաւորութիւններէն: Նոյնպէս իր ժամանակը արդէն ապրած աւանդ մը, որ նոր պայմաններու եւ մարտահրաւէրներու ընդառաջելու կազմակերպական անհրաժեշտ գէնքե-

**Հայ իրականութեան մէջ նոր ժամանակներուն բերած փոփոխութիւնը, հետեւաբար, չի վերաբերիր Անձնուիրութեան արժէքին եւ անոր պահպանման հրամայականին, այլ՝ կապ ունի միեւնոյն Անձնուիրութեան աւանդը վերանորոգող կազմակերպական կառոյցներու արդիականացման հետ:**

րը չունի այսօր:

Անձնուիրութեան այդ ժառանգութիւնը, անկասկած, այսօր եւս աղբիւր է ինքնակազմակերպման սատարող անսպառ զօրութեան, պայմանաւ որ աւանդական այդ ներուժը գտնէ իր ինքնադրսեւորման արդիւնաւէտ կառոյցները՝ վերանորոգ թափով շարունակելու համար իր ծառայութիւնը, ի խնդիր նոր ժամանակներու եւ պայմաններու դիմագրաւումին:

Մերօրեայ հայ երիտասարդը անձնուիրութեան այդ աւանդին անհաղորդ ըլլալու որեւէ պատճառ չունի: Ազգային եւ հանրային զարգացման ու յառաջդիմութեան կամաւոր կերպով ծառայելու եւ անձնդիր ծառայելու յանձնառութիւնը ժամանակի պայմանաւորում չի ճանչ-

նար, բոլոր ժամանակներուն համար ալ օրինակելի մղիչ ուժ է:

Հայ իրականութեան մէջ նոր ժամանակներուն բերած փոփոխութիւնը, հետեւաբար, չի վերաբերիր Անձնուիրութեան արժէքին եւ անոր պահպանման հրամայականին, այլ՝ կապ ունի միեւնոյն Անձնուիրութեան աւանդը վերանորոգող կազմակերպական կառոյցներու արդիականացման հետ: Ազգային ու հանրային ինքնակազմակերպման ծառայող մեր միութենական կառոյցներուն բնորոշ նուիրեալ առաջնորդներու եւ հաւատաւոր հետեւորդներու երբեմնի հաւասարեցումը այլեւս ի վիճակի չէ ընդառաջելու նորանոր անյայտներով յատկանշուող մեր կեանքի մարտահրաւէրներուն:

Ինչպէս աշխարհասփիւռ մեր ժողովուրդը, նոյնպէս եւ նորահաս մեր սերունդները պէտք է հասանելի դառնան ազգային-միութենական մեր կազմակերպ կառոյցներուն համար: Ժամանակները եւ կեանքի պայմանները վերջակէտ դրած են ինքնամփոփ ու փակ միջավայրով ապրելու հայերուս հաւաքական կեանքի անցեալի կենսակերպին: Մեր ապրած երկիրներու հասարակական կեանքին մէջ ամբողջական համարկումը, միաժամանակ, անհատական եւ ընտանեկան ինքնամփոփման ու կղզիացման նոր կենսակերպ մը յառաջացուցած է, ինչ որ մեծապէս դժուարացուցած է հայ երիտասարդին հասնելու կազմակերպական մեր հնարաւորութիւնը:

Ելքը կը գտնուի ազգային-միութենական մեր կառոյցներու ժողովրդավարական վերանորոգման մէջ, որպէսզի նորահաս սերունդներու յանձնառու տարրին նուիրաբերումը զինուրի առաւելագոյն մասնակցութեան եւ ներդրումի հնարաւորութիւններ ընձեռող կազմակերպութեամբ:

Ռազմավարական թիւ 1 առաջնահերթութեան վերածած է կազմակերպական վերանորոգման այս հրամայականը՝ Անձնուիրութեան անսպառ զօրութիւնը առաւելագոյն մասնակցութեան կենսատու ուժականութեամբ զինելու նորօրեայ մարտահրաւէրը:

# ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՆՈՒԻՐԱԿԱՆ ՈՒ ՍՐԲԱԶԱՆ ԳՈՐԾ Է

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ Կ'ԸՍԷ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
ՆԱԽԿԻՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ԳԷՈՐԳ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

**Հարցազրույցը վարեց՝ Րաֆֆի Սիլվահեան  
ՀԱԼԷՊ**

Կրնա՞ք դուք ձեզ ներկայացնել «Մարզիկ»ի ընթերցողներուն:

- Ծնած եմ Հալէպ, 1941ին: Ծնողքս տեղահան եղած է Արեւմտեան Հայաստանի Խարբերդ քաղաքէն: Նախնական կրթութիւնս ստացած եմ Հալէպի Ազգային Սահակեան վարժարանը, ապա՝ Քառէն Եփփէ Ազգ. Ճեմարանը: Տասը տարեկանիս կորսնցուցած եմ մայրս եւ, կեանքի դաժան պայմաններու բերումով, փոքր տարիքէս հեռացած եմ դպրոցէն եւ ուղղուած եմ գործի, իբրեւ արհեստ ընտրելով մեքանիքի ասպարէզը:

Ի՞նչպէս սկսած է Հ.Մ.Ը.Մ.ականի ձեր ծառայութիւնը:

- Հ.Մ.Ը.Մ.ին անդամագրուած եմ 1946ին, իբրեւ Հալէպի մասնաճիւղի գայլիկ: 1954ին, «Օրիանթալ» շարժապատկերի



Տիգրան Խոյեանի հետ:

սրահին մէջ երդման արարողութիւն կատարելով՝ գայլիկութենէն փոխանցուած եմ սկաուտական շարքեր: Այդ շրջանին մաս կազմած եմ Հ.Մ.Ը.Մ.ի «Կռունկ» խումբին: Մասնաճիւղին խմբապետն էր եղբ. Աբրահամ Աւընեանը, իսկ խումբին պատասխանատուն՝ եղբ. Ժիրայր Թորոսեանը: Սկաուտական շարքերու մէջ հասած եմ Վարիչ Առաջնորդի աստիճանին:

Սկաուտական գործունէութեան առընթեր, մաս կազմած եմ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական մարզական կեանքին, ի մասնաւորի՝ աթլէթի եւ ֆուլթպոլի մարզախաղերուն: Այդ շրջանին կը գործէր ֆուլթպոլի «Նաւասարդեան» խումբը եւ ինծի վստահուած էր խումբի խմբապետութիւնը: Շրջան մը ետք փոխանցուեցայ սկաուտական Պատուոյ խումբ, որմէ ետք՝ ներկայացուցչական առաջին խումբ: Նոյն օրերուն մաս կազմեցի նաեւ Հալէպի ֆուլթպոլի երիտասարդական կազմին:

Զինուորական ծառայութեանս օրե-



Հ.Մ.Ը.Մ.ի Գ. Պատգամաւորական ժողովին:

րուն, Դամասկոսի մէջ գտնուած շրջանիս, մաս կազմած եմ Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն մասնաճիւղի Ֆութպոլի Ա. խումբին:

Ի՞նչ պատասխանատուութիւններ վարած էք միութենական ձեր երկարամեայ կեանքին ընթացքին:

- 1964ին, գործիս ծանր պայմաններուն բերումով, ստիպուեցայ շրջան մը կասեցնել միութենական աշխատանքս, սակայն կարճ ժամանակ մը ետք նշանակուեցայ Սկաուտ. Խորհուրդի անդամ: Նկատի առնելով Հ.Մ.Ը.Մ.ի մարզական կեանքի աշխոյժ եւ բեղուն աշխատանքը, լծուեցայ մարզական կեանքի դեկավարման եւ նշանակուեցայ Ֆութպոլի յանձնախումբի ատենապետ, ապա՝ պետական վարչութեան անդամ եւ մարզական ընդհանուր պատասխանատու: 1983էն սկսեալ գործեցի իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամ: 1998ին ստացայ Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշան:

Մասնակցած եմ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական վեց ժողովներու. - 1979ին Կիպրոս, 1983ին եւ 1987ին Յունաստան, ուր ընտրուած եմ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան փոխ անդամ, 1999ին Լիբանան, 2003 եւ 2007 թուականներուն՝ Հայաստան:

2001 թուականին մասնակցած եմ Լիբանանի մէջ կայացած Հ.Մ.Ը.Մ.ի միջ-դիւանական ժողովին: Նոյն օրերուն, Պէյրութի մէջ տեղի ունեցան Համա-Հ.Մ.Ը.Մ.-ական ճորճ մարզախաղերը, որոնց Սուրիոյ շրջանը մասնակցեցաւ 150 մարզիկներով եւ շեփորախումբի անդամներով: Փինկ-փոնկի եւ ակթիթի մարզախաղերուն մենք յաջողեցանք արձանագրել տպաւորիչ արդիւնքներ, իսկ Ֆութպոլի պարագային տիրացանք ախոյեանութեան:



Աջէն առաջինը՝ ֆութպոլի յանձնախումբի ատենապետ:

2003ին ընտրուած եմ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ: Այդ շրջանի կարեւորագոյն ծրագիրներէն մէկը եղաւ Տէր Զօրի եւ Մարկատէի մէջ, համահայկական տարողութեամբ, ուխտագնացութեան մը կազմակերպումը: Ուխտագնացութեան իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի, Ֆրանսայի, Քուէյթի, Իրաքի, Լիբանանի եւ Սուրիոյ մասնաճիւղերը: Այս առիթով, Մարկատէի մէջ 300 Հ.Մ.Ը.Մ.ականներ երգում կատարեցին հաւատարիմ մնալու իրենց ժողովուրդի նահատակներուն, յիշողութեան եւ պահանջատիրութեան: Կեդրոնական Վարչութեան անդամ եղած շրջանիս, Վարչութեան բոլոր անդամներուն ջանքերով, ի մասնաւորի՝ Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի եւ փոխ ատենապետ եղբ. Ստեփան Տէր Պետոսեանի շնորհիւ, մենք ունեցանք աշխոյժ եւ արդիւնաբեր գործունէութիւն:

60 տարուան միութենական ձեր ծառայութեան ընթացքին, որո՞նք ազդած են ձեր վրայ:

- Ես համոզուած եմ, որ Հ.Մ.Ը.Մ.ը հայ պատանին ու երիտասարդը հայօրէն մեծցրնելու առաքելութեամբ օժտուած միութիւնն է: Հ.Մ.Ը.Մ.ական վաստակիս մէջ անուրանալի դերակատարութիւն ունեցած են եղբ. Մանուէլ Հալլաճեանը եւ խմբապետ եղբ. Աբրահամ Աւրնեանը: Շատ բան կը պարտիմ իրենց, յատկապէս Հ.Մ.Ը.Մ.անավայել ընթացքիս եւ միութեան կանոնադրին ծանօթութեանս համար: Այս առիթիւ կ'ուզեմ երախտագիտական եւ շնորհակալական խօսքերս փոխանցել իրենց եւ բոլոր խմբապետներուս, որոնք միութենական պատրաստութեանս վրայ դրած են իրենց դրոշմը:



Չախէն չորրորդը՝ սկաուտական Պատուոյ Ա. խումբ:



Չախեն վեցերորդը՝ սկաուտական Պատուոյ Ա. խումբ:

Ձեր կարծիքով, ի՞նչ է Հ.Մ.Ը.Մ-ի դերը նոր սերունդի դաստիարակութեան գործին մէջ:

- Հ.Մ.Ը.Մ-ի դերը նոր սերունդի դաստիարակութեան գործին մէջ հիմնականօրէն կը կայանայ հայ պատանին ու երիտասարդը հայ պահելու եւ անոր անհատականութիւնը զօրացնելու առաքելութեան մէջ: Հ.Մ.Ը.Մ-ի մէջ կը պատրաստուի ազգին մարդուժը, ո՛չ միայն մարզական եւ սկաուտական բնագաւառներուն մէջ, այլեւ՝ ազգային կեանքին մէջ: Հ.Մ.Ը.Մ-ը կը հաւատայ Ֆիզիքական եւ մտային իմաստով մարդակերտման աշխատանքին, այդ պատճառով մարզանքը միջոց է հոգին ու միտքը ազնուացնելու: Իսկ անոնք որոնք մարզական կեանքին կը մօտենան նիւթական նկատառումներով, իրենց օրինակով կը պատրաստեն նիւթապաշտ մարդիկ եւ պատճառ կը դառնան միութեան ուղղութեան շեղումին:

Մեր սերունդը թէեւ դաստիարակուած ու պատրաստուած է դժուար պայմաններու մէջ, սակայն մեր թրծումը եղած է ամուր հիմերու վրայ: Կը ցանկամ, որ մեզի յաջորդող սերունդներն ալ, որոնք կ'ապրին մեզմէ բոլորովին տարբեր պայմաններու մէջ, մեզի նման պատրաստուին հաւատարիմ մնալու Աստուծոյ, ազգին, հայրենիքին եւ դառնան Հայ Դատի պաշտպան: Հոս կ'ուզեմ գնահատել «Մարզիկ» ամսաթերթին դերակատարութիւնը այս իմաստով: Հ.Մ.Ը.Մ-ի ներկայ սերունդը բախտաւոր է, որ ունի «Մարզիկ»ը: «Մարզիկ» 31 տարիէ միջոց մըն է միութեան աշխարհատարած մասնաճիւղերու քոյրերն ու եղբայրները իրարու ծանօթացնալու, շրջաններու գործունէութիւնները բոլորին սեփականութիւնը դարձնելու, միութեան խօսքը տարածելու եւ գաղափարախօսութիւնը ներկայացնելու համար: Վարձքը կատար թերթի աշխատակազմի բոլոր անդամներուն եւ ի մասնաւորի խմբագիր եղբ. Վիգէն Աւագեանին:

Ի՞նչ տարբերութիւններ կը նկատէք նախկին եւ ներկայ Հ.Մ.Ը.Մ-ականներուն միջեւ:

- Հին եւ նոր սերունդներու կենցաղներուն մէջ հսկայական տարբերութիւններ կան, սակայն այստեղ չէ հարցը:

Հարցը կը կայանայ ազգային եւ միութենական դաստիարակութեան մէջ նկատուած թերացումներուն, ընկրկումներուն: Հետզհետէ կը նուազի ազգային դաստիարակութեան չափը: Այս մէկը աւագ սերունդի հիմնական մտահոգութիւններէն մէկը կը հանդիսանայ: Կը ցանկանք, որ այս հարցը շուտով գտնէ իր յարմար լուծումը:

Իբրեւ Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական Վարչութեան նախկին անդամ, Սուրիոյ շրջանը ինչո՞վ կը գատորոշուի միութեան այլ շրջաններէն:

- Սուրիոյ շրջանը այն եզակի շրջաններէն է, որուն պետական վարչութիւնը կը նշանակուի պետութեան կողմէ: Այս պարագան ժամանակին կը խանգարէր

միութեան կանոնագրի կարգ մը կէտերուն գործադրութիւնը: Այսօր այդ արգելքը վերացած է, հետեւաբար ժամանակն է վերաշխուժացնելու մեր ուժերը: Հարկ է, որ արհեստավարժութենէն հեռանանք եւ միութեան հետապնդած նպատակներուն հրամայականով ընդառաջ երթանք եւ ընտրենք մասնագիտական վարչութիւններ:

Դուք պատիւը ունեցած էք հանդիպելու Տիգրան Խոյեանի եւ Դրոյի հետ, ի՞նչ կը փոխանցէք մեզի ձեր յուշերէն:

- Դրոյին հետ կապուած, լաւ կը յիշեմ գայլիկութեանս այն օրը, երբ հերոս Դրօն 1950ականներու սկիզբը այցելեց Հալէպի «Նաւասարդեան» դաշտը, եւ ես մեծ եռանդով մասնակցեցայ անոր դիմաւորութեան եւ պատիւը ունեցայ Հ.Մ.Ը.Մ-ի անունով բարի գալուստի ծաղկեփունջ մը փոխանցել իրեն:

Տիգրան Խոյեանի հանդիպած եմ 1983ին, Յունաստանի մէջ տեղի ունեցած Հ.Մ.Ը.Մ-ի Գ. Ընդհանուր ժողովին: Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադիր սերունդի գործակից Տիգրան Խոյեանի ներկայութիւնը այդ ժողովին, անոր արտայայտութիւններն ու խօսքերը դաստիարակիչ բնոյթ ունեցան եւ բոլորս տպաւորեցին:

Իբրեւ եզրափակում, ի՞նչ խօսք կ'ուզէք փոխանցել:

- Իբրեւ Հ.Մ.Ը.Մ-ական, վաթսուներեք աշխատանքս ծաւալած եմ այն համոզումով, որ ազգային եւ միութենական գործը նուիրական ու սրբազան գործ է: Ինձի համար իսկապէս սրբազան գործ է հայ երիտասարդի ազգային պատրաստութեան աշխատանքը: Երիտասարդութիւն՝ որ պատուաբեր գործունէութեամբ ազգին ու հայրենիքին պարծանքի առարկան կը դառնայ:

Այս նուիրական առաքելութիւններէն մէկը վստահուած է Հ.Մ.Ը.Մ-ին: Հաւատալով, որ մեր սերունդները կը կերտուին եւ իբրեւ յարգուած անձեր կը թրծուին միութիւններու մէջ, նորանոր յաջողութիւն ու անխափան վերելք կը մաղթեմ իմ շատ սիրած միութեանս՝ Հ.Մ.Ը.Մ-ին:

Յարգանք բոլոր Հ.Մ.Ը.Մ-ականներուն:



# ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ



1933. Հ.Մ.Ը.Մ.ի Հայկաի  
ողիմպիական  
դաշտահանդեսին:

## Ներսես Արք. Բախտիկեան (1911-1989) ԱՆՏԻՊ, ԻԷ. ՄԱՍ

**Պէյրուլթ-** երկու պատգամաւոր՝ Գրիգոր Գարայեան եւ տոքթ. Յակոբ Գասապեան:

Պապատա- մէկ պատգամաւոր՝ Իշխան Խաչատուրեան:

Չահլէ- մէկ պատգամաւոր՝ Ներսէս Գազազեան:

Թրիփոլի- մէկ պատգամաւոր՝ Յովհաննէս Շահինեան (Պէյրուլթի մասնաճիւղէն):

Լիազօրուած պատգամաւորներէն զատ, խորհրդակցական ձայնով կը հրաւիրուին Ալպէր Յակոբեան, Օննիկ Պէօճէքեան, Վահան Ղազէրեան, Արամ Քիւրտեան, Գեղամ Ազիլլեան եւ Վահրամ Զոքքարեան:

Պատգամաւորական ժողովը կը զբաղի երկու գլխաւոր օրակարգով.-

1. Սուրիոյ եւ Մեծն Լիբանանի շրջանին համար անհրաժեշտ է Շրջանային Վարչութեան մը կազմութիւնը:

2. Շրջանային Վարչութեան ընտրութիւն:

«Պատգամաւորական ժողովը բացարձակ միաձայնութեամբ հաստատեց Շրջանային Վարչութեան մը կազմութիւնը: Պէյրուլթ՝ Սուրիոյ եւ Մեծն Լիբանանի կեդրոնը ըլլալուն հանգամանքով, Պատգամաւորական ժողովը որոշեց Պէյրուլթը որպէս Շրջանային Վարչութեան վայր» (Ատենագրութիւն Ա. Պատգամաւորական ժողովի, 1 Ապրիլ 1929):

Անդրանիկ Շրջանային Վարչութեան անդամ կ'ընտրուին տոքթ. Ալեքսան Պէյգճեան, Զարեհ Տօնապետեան, Տաճատ Սրապեան, տոքթ. Յակոբ Գասապեան, Յովհաննէս Շահինեան, Ալպէր Յակոբեան եւ Զարեհ Սարեան:

Շրջանային Վարչութեան այս կազմը երկար կեանք չ'ունենար: Անդամներէն ոմանք քաղաքէն կը մեկնին, ուստի կ'ենթարկուի վերակազմութեան՝ հետեւեալ ցանկով.- տոքթ. Ա. Պէյգճեան, Վահան Թորոսեան, Տաճատ Սրապեան, Սիմօն Թերճանեան, Խորէն Սուքիասեան, տոքթ. Յակոբ Գասապեան եւ Ճորճ Միսիրեան:

Շրջանային Վարչութեան առաջին քայլերուն մասին կը կարդանք.

«Շրջանային Վարչութիւնը գործի ձեռնարկելուն, իր առաջին քայլերուն մէջ, հանդիպեցաւ նիւթականին հետ նաեւ մասնագիտական դժուարութիւններու: Եւ սակայն, շարժումը իր սրտին հարազատ զգալով, գօտեպնդուած, անվհատ շարունակեց շրջանի կազմակերպման գործը: Ան ամէն ճիգ թափեց բարձրացնելով շրջանի կարգապահական ոգին... այսպէսով իսկ հարթելով ճանապարհն ու դժուարութիւնները...»:

Այս օրերուն «գրեթէ բոլոր մասնաճիւղերուն մէջ, կը պակսին թէ՛ մարզական եւ թէ՛ սկստական մասնագէտները: Այս գոյգ շարժումներն ալ, գրեթէ, իրենց նախնական վիճակի մէջ են, բացի Ֆուլթպոլէն, որուն խումբերը, տեղական հայ եւ օտար խումբերուն հետ բաղդատելով առաջին շարքերուն վրայ կը գտնուին»:

Շրջանային Վարչութեան մը բարոյական ազդեցութիւնը, որպէս վերին մարմին, իր բարերար դերը պիտի ունենար եւ աւելի հիմնաւորէր Հ.Մ.Ը.Մ.ի գոյութիւնը աշխարհագրական ընդարձակ տարածութեան մը վրայ: Մասնաճիւղերը, իրենց կարգին, պրկուած աշխատանքով իրենց թափած քրտինքը պիտի արդիւնաւորէին օր ըստ օրէ:

Պէյրուլթի վարչութիւնը, ի խնդիր հաւաքավայրի մը, մանաւանդ Կիրակի օրերու գործածութեան համար, կը դիմէ

Ազգ. վարժարանի հոգաբարձու թեան, անկէ խնդրելով որ իրենց տրամադրուի վարժարանի սենեակներէն մէկը: Հոգաբարձու թիւնը ընթացք տալով, Ապրիլ 14ին, կը գումարուի ընդհանուր անդամական ժողով, ուր կ'ընտրուի վարչութիւն, որուն կը մասնակցին՝ Արամ Քիւրտեան, Կարապետ Պատուհասեան, Օննիկ Պէօճէքեան, Օննիկ Փիլիկեան, Շաւարշ Պէքերեան, Ա. Ղազէրեան եւ Վահան Ղազէրեան:

Նորընտիր վարչութիւնը իր առաջին նիստին, 24 Ապրիլ 1929, ընդառաջելով Ս. Նշան Ազգ. վարժարանի դիմումին, իրենց սարքելիք «դաշտահանդէսին Հ.Մ.-Ը.Մ.-ի անդամներուն կարգապահութեան հսկելու», երեք յանձնախումբեր կը կազմէ:

«Դաշտային գործերը աւելի լաւ վիճակի մէջ դնելու համար նկատի կ'առնուին» Ա. Ղազարեան, Քեայեայեան, Թաղէոս Գարագալբազեան, Բ. Միսաւետիքեան, Ղազարոս Գասապեան, Ե. Երամեան, Պ. Շահինեան եւ Ժ. Սերոբեան: Իսկ «վարչութիւնս նկատի առնելով սկսուածներու անկազմակերպ վիճակը, որոշեց չորս հոգինոց յանձնախումբ մը կազմելով աւելի լայն հիմերու վրայ դնել այս գործը»: Այս յանձնախումբին մաս կը կազմեն Գ. Գարայեան, Հ. Դաւիթեան, Կ. Աւագեան: Նաեւ «որոշուեցաւ ողիմպիականի խաղերու համար չորս հոգինոց յանձնախումբ մը կազմելով աւելի լայն հիմերու վրայ դնել այս գործը»: Այս յանձնախումբին մաս կը կազմեն Գ. Գարայեան, Հ. Դաւիթեան, Կ. Աւագեան: Նաեւ «որոշուեցաւ ողիմպիականի խաղերու համար չորս հոգինոց յանձնախումբ մը - Չ. Սարեան, Ա. Յակոբեան, Յ. Շահինեան, Օ. Փիլիկեան»:

Սկսուտապետ Յ. Սերոբեանի դիմումին, վարչութիւնը



5 Մայիս 1927ին, Պէյրուք. Ազգային վարժարանի աշակերտներ Բ. ողիմպիականին ընթացքին:

պարտականութիւն կու տայ Օ. Փիլիկեանին գնելու փողկապ, գլխարկ եւ արշաւներու համար վրան մը: Իսկ անոնց առողջապահական նիւթերու շուրջ դասախօսելու համար, պարտականութիւն կը տրուի տոքթ. Յակոբ Գասապեանին, հուսկ ապա, ընթացք կը տրուի իրենց սկսուտական արշաւ մը կազմակերպելու առաջարկին:

Թրիփոլիի մասնաճիւղը, իր հիմնադրութենէն անմիջապէս վերջ, կ'ունենայ իր ակումբը, իր ակումբին մէջ գրադարանը, որուն ճոխացման համար կը ներկայացնէ «Պաղտասար Աղբար»ը եւ կը դիմէ «Յուսաբեր», «Արեւ», «Երկունք», «Բուժանք», «Հայրենիք», «Ապագայ», «Ասպարէզ» թերթերու խմբագրութիւններուն՝ իրենց օժանդակելու համար: Օգոստոս 18ին լոյս կ'ընծայէ «Վիտոլ խմորատիպ պատանեկան շաբաթաթերթը»: Առաջին առիթով իսկ, Թրիփոլի կը բաժանորդագրուի «Նոր Սերունդ» մարզական թերթին, որ այդ օրերուն մեր բոլոր մասնաճիւղերն ալ կը ստանային քանի մը օրինակներով:

Իր սեփական ակումբին մէջ, Թրիփոլիի մասնաճիւղը կը գումարէ անդամական իր երկրորդ ընդհանուր ժողովը, 2 Յունիս 1929ին, ընտրելու նոր վարչութիւն. կ'ընտրուին՝ Յովսէփ Առաքելեան, Միսաք Լիպարիտեան, Վահան Գալաթեան, Իսահակ Գարաճեան եւ Արիս Աթմաճեան:

Հ.Մ.-Ը.Մ.-ը ամէնուրեք մարզական կեանքի դերին մէջ է, հանրային բոլոր ձեռնարկներու մասնակից: Թրիփոլիի թաղական խորհուրդը կը խնդրէ վարչութեանէն, որ «միութեանս մարզիկ անդամները ստանձնեն Ազգ. վարժարանի ամպերջի հանդէսին հսկողութիւնը»: Ասոր համար ալ ամէն կիրակի անընդ-



1927. 3 Մ.Ճ.Մ.ի Հալեպի պառաջին երդուեալ սկսուածները կեդրոնը եղբ. Լուսինի մատպանաճեան:

հատ տեղի ունեցող ֆուլթպոլի խաղը կը յետաձգուի: Ֆուլթպոլիստները դաշտ կ'իջնեն առանց խաղին պահանջած տարագին, ուստի «ատենապետին Պէյրոլթ այցելելու առիթէն օգտուելով, վարչութիւնս որոշեց բերել տալ ֆուլթպոլիստներու յատուկ ֆանելաներ» եւ սակայն, «գփբախտաբար նիւթականը անբաւարար ըլլալով չկրցաւ բերել» (Ատենագրութիւն 30 Յունիսի եւ 28 Յունիսի նիստերու): Այսուհանդերձ, «Հ.Մ.Ը.Մ.ի Թրիփոլի վարչութիւնը կը գործէ անընդհատ: Անդամներուն թիւը արդէն 25ի բարձրացած է: Մեծ խանդավառութիւն եւ հետաքրքրութիւն ստեղծած է պատանիներուն մէջ: Ամէն կիրակի տեղի կ'ունենան իրենց խաղերը» («Ազդակ», 10 Յունիս 1929):

Զահլէն նմանապէս աշխոյժ է: Իր նեղ շրջագիծէն դուրս գալով, յանդգնութիւնը կ'ունենայ այցելելու Դամասկոս, ընդառաջելով իրեն եղած դիմումին: Յունիս 7ին, խումբը կը հասնի Դամասկոս, «իր քոյր մասնաճիւղի ֆուլթպոլի



1935. Հ.Մ.Ը.Մ.ի Ռաս իւլ Այնի ֆուլթպոլի խումբը:

ձեզ, բոլորդ ալ, մասնակցելու այս հաճելի պտոյտին:

«Յիշեցէք թէ կեանքի լաւագոյն յիշատակները կը կազմուին ընկերային զուարթ շրջանակներու մէջ եւ նախընտրեցէք բարձունքներու ջինջ օղն ու չարքաշ կեանքը, քաղաքի թաղերուն հեղձուցիչ ու ձանձրալի կեանքէն» («Ազդակ», 23 Մայիս):

(Շար. 27)

խումբին հետ մրցում մը կատարելու:

«Խաղը շատ կանոնաւոր ու հետաքրքրական էր. վերջացաւ Դամասկոսի յաղթութեամբ: Նկատելի էր որ շատ մը հայրենակիցներ գուրգուրոտ վերաբերմունք մը ունին Հ.Մ.Ը.Մ.ի հանդէպ» («Ազդակ», 13 Յունիս 1929):

Պէյրոլթի մասնաճիւղի վարչութիւնը գեղեցիկ գաղափարը կ'ունենայ 1929 Յունիս 28ին, արշաւ մը կազմակերպելու դէպի Ալէյ. «Միութեան գործօն թէ համակիր անդամներ, կը հրաւիրենք

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL



PAVILLON MONCEAU  
PARIS

Full of charme,  
Tastefully decorated 36 rooms  
and 6 suites with individual  
heating / air conditioning,  
direct access telephone line,  
internet connection, minibar,  
safety box and satellite TV.  
Private bathroom with hairdryer.  
The suites can accommodate  
3 adults or a family  
with parents and 2 children.

PAVILLON MONCEAU



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris  
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com  
www.pavillon-monceau.com

Studio YCKEN 2005 PARIS



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԽԱՂԻՆ ԼԱԻԱԳՈՅՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՏՐԱԿԻ ԽՈՒՄԲԸ 14 ԿԷՏՈՎ ԿԸ ՆՈՒԱՃԷ  
ԱՇԽԱՐՀԻ ԽՄԲԱՅԻՆ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՏԻՏՂՈՍԸ

**Ճ**ատրակի 37րդ ողիմպիականին աշխարհի ախոյեան հռչակուելէ հինգ տարի ետք, 26 Յուլիս 2011ին, Հայաստան անգամ մը եւս նուաճեց իմաստութեան խաղին աշխարհի լաւագոյն ներկայացուցիչի տիտղոսը, երբ 5 յաղթանակով եւ 4 հաւասարութեամբ իր անունը արձանագրեց ճատրակի պատմութեան ոսկեմատեանին մէջ:

Չինաստանի Նինկաօ քաղաքին մէջ տեղի ունեցած աշխարհի խմբային Ցրդ ախոյեանութեան, Հայաստան ներկայացաւ հօր կազմով մը, որուն մաս կազմեցին Սերգէյ Մովսիսեան, Վլատիմիր Յակոբեան, Լեւոն Արոնեան, Գաբրիէլ Սարգսեան եւ Ռոպէրթ Յովհաննիսեան:

Հայաստանի մրցակիցները եղան Չինաստան (13 կէտով երկրորդ), Ուքրանիա (12 կէտով երրորդ), Ռուսիա (10 կէտ), Հունգարիա (10 կէտ), Մ. Նահանգներ (10 կէտ), Ազրպէյճան (9 կէտ), Հնդկաստան (7 կէտ), Իսրայէլ (5 կէտ) եւ Եգիպտոս (0 կէտ): Հայաստան հանդիսացաւ միակ կազմը, որ ախոյեանութիւնը աւարտեց առանց պարտութեան: Միաժամանակ, ան եղաւ հինգերորդ երկիրը, որ տիրացաւ տիտղոսին՝ Խ. Միլութենէն (2 անգամ), Մ. Նահանգներէն (1 անգամ), Ռուսիայէն (3 անգամ) եւ Ուքրանիայէն (1 անգամ) ետք:

Հայաստան ախոյեանութիւնը սկսաւ տպաւորիչ կերպով, երբ 3.5-0.5 արդիւնքով պարտութեան մատնեց Իսրայէլը: Հայաստանի առաջին երեք կէտերը ապահովեցին Լեւոն Արոնեան, Վլատիմիր Յակոբեան եւ Գաբրիէլ Սարգսեան, մինչ Սերգէյ Մովսիսեանի հաւասարութիւնը արժեք կէս կէտ:

Երկրորդ եւ երրորդ հանգրուաններուն, Հայաստան 2-2 արդիւնքով հաւասարութիւններ արձանագրեց Մ. Նահանգներու եւ Ռուսիոյ զօրաւոր խումբերուն դէմ, պահ մը պարագլուխի իր դիրքը զիջելով Ռուսիոյ: Երկու հանգրուաններուն ալ լուսարձակները ամէնէն աւելի իր վրայ կեդրոնացուց Լեւոն Արոնեան: Երկրորդ հանգրուանի իր պարտութիւնը պատճառ դարձաւ Մ. Նահանգներու դէմ Հայաստանի հաւասարութեան, իսկ երրորդ հանգրուանի իր յաղթանակը թանկագին հաւասարութիւն մը շնորհեց Հայաստանի՝ Ռուսիոյ հետ:

Յաջորդ չորս հանգրուանները Հայաստանի պարգեւեցին չորս յաղթանակներ՝ Եգիպտոսի (3.5-0.5), Չինաստանի (2.5-1.5), Հնդկաստանի (2.5-1.5) եւ Հունգարիոյ (2.5-1.5) դէմ: Եգիպտոսի դէմ ճակատումէն ետք Հայաստան առանձնացաւ ախոյեանութեան պարագլուխի դիրքին վրայ եւ արժանաբար զայն պահեց մինչեւ ախոյեանութեան աւարտ:

Ախոյեանուլթեան ուլթերորդ հանգրրուանը կը կարծուէր, որ պիտի ըլլար ամէնէն ճակատագրականը, որովհետեւ յաղթանակ մը բաւարար պիտի ըլլար, որ Հայաստան նախապերջին հանգրուանին դառնայ տիտղոսակիր, սակայն Ազրպէյճանի դէմ մրցումը ակարտեցաւ 2-2 հաւասարուլթեամբ եւ տիտղոսակիրի անունին վճռումը յետաձգուեցաւ վերջին հանգրուանին, ուր հաւասարուլթիւն մը այս անգամ բաւարար պիտի ըլլար ախոյեանուլթեան տիրացման համար:

26 Յուլիսը շնչասպառ ըրաւ աշխարհասփիւռ հայուլթիւնը, որ ակնդէտ հետեւեցաւ Հայաստան-Ուլթրանիա ճակատումին: Չորս հաւասարուլթիւններ Լեւոն Արոնեանի, Սերգէյ Մովսիսեանի, Վլատիմիր Յակոբեանի եւ Գաբրիէլ Սարգսեանի կողմէ 2-2 արդիւնք մը պարտադրեցին Ուլթրանիոյ եւ տիտղոսը առաջին անգամ ըլլալով շնորհեցին Հայաստանի: Այն երկրին, որ 1997ին, 2001ին եւ 2005ին տիրացած էր ախոյեանուլթեան պրոնզէ մետալին, իր հայեացքը սակայն սեւեռած պահելով ոսկիին, առաջնուլթեան:

Հայրենի վարպետները ախոյեանուլթեան ընթացքին



առանձնաբար ապահովեցին հետեւեալ կէտերը: - Սերգէյ Մովսիսեան 6 կէտ (3 յաղթանակ, 6 հաւասարուլթիւն), Վլատիմիր Յակոբեան 6 կէտ (3 յաղթանակ, 6 հաւասարուլթիւն), Լեւոն Արոնեան 5 կէտ (3 յաղթանակ, 2 հաւասարուլթիւն), Գաբրիէլ Սարգսեան 4-5 կէտ (2 յաղթանակ, 5 հաւասարուլթիւն), Ռոպէրթ Յովհաննիսեան 1 կէտ (1 յաղթանակ):

**ARMENIA**

for private and group trips

www.saberatours.fr

# Saberatours Sevan Voyages



WITH THE COLLABORATION OF  
THE NEW AIRLINE COMPANY



Photos: © Yann Arthus-Bertrand, La Terre vue du Ciel. Licence 075 960031 Studio VICKEN 2005 PARIS

- Direct Flights  
PARIS  
YEREVAN  
PARIS
- Select  
your Journey
- Guided Tours  
for 8 Days  
or 12 Days



11, rue des Pyramides  
75001 Paris  
tel 331 42 96 10 10  
fax 331 42 96 18 77  
saberatours@selectour.com




48, cours de la Liberté  
69003 Lyon  
tel 334 78 60 13 66  
fax 334 78 60 92 26  
sevan@selectour.com



67, La Canebière  
13001 Marseille  
tel 334 95 09 30 60  
fax 334 95 09 30 61  
marseille@wasteels.fr



32-38, rue Hanrabedoutian  
Yerevan  
tel 374 10 52 55 55  
fax 374 10 56 40 30  
sabera@arminco.com



# ՔՈՓԱ ԱՄԵՐԻԿԱ 2011

## ՄԵԾԵՐՈՒՆ ԶԱԽՈՂՈՒԹԻՒՆԸ

### Գեորգ Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ



Բոֆա Ամերիկայի 43րդ մրցաշարքը տեղի ունեցաւ Արժանթինի մէջ, 1-24 Յունիս 2012ին։ Մրցաշարքին մասնակցեցան 12 երկիրներ՝ Արժանթին, Պրագիլ, Չիլի, Վենեզուելա, էքուատոր, Բոլիվիա, Քոսթա Ռիքա, Փերու, Փարակուէյ, Մեքսիքա, Ուրուկուէյ եւ Պոլիվիա։

Կատարուէցան 26 մրցումներ, նշանակուեցան 48 կոլեր։ Աւարտականին, Ուրուկուէյ պարտութեան մատնելով Փարակուէյի լաւ պատրաստուած կազմը՝ տիրացաւ տիտղոսին։ Մրցաշարքի լաւագոյն մարզիկ ընտրուեցաւ Ուրուկուէյի յառաջապահ Լուիս Սուարէզ։ Մրցաշարքի կոլ-սքորըրը հանդիսացաւ փերուցի Փառլո Կերերո՝ հինգ կոլով։ Լաւագոյն երիտասարդ մարզիկը ընտրուեցաւ ուրուկուէյցի Սեպասթիան Քոսթէս, լաւագոյն բերդապահը՝ փարակուէյցի Խոսէ Կրոս, իսկ մրցաշարքի Ֆէր-փլէյ կազմը՝ Ուրուկուէյ։

Մրցաշարքը անակնկալներով լեցուն եղաւ կարգ մը երկիրներու համար։ Գլխաւոր թեկնածուներ՝ Արժանթին եւ Պրագիլ յուսախաբ ընելով իրենց համակիրները, կանուխ հրաժեշտ տուին մրցաշարքին։

Քոսթա Ռիքա եւ Մեքսիքա, որոնք կը ներկայացնէին Կեդրոնական Ամերիկան, ոչինչ ըրին։ Մեքսիքացիք իրենց կատարած երեք մրցումներն ալ աւարտեցին պարտութեամբ։ Իրենց խաղար-



կութեամբ անոնք բաւական հեռու էին տարի մը առաջ Մոնտիալի ընթացքին իրենց ցուցաբերած ֆուլթպոլէն։ Մինչ Քոսթա Ռիքա պայքարեցաւ լաւագոյն երրորդ դիրքին համար, որպէսզի հասնի Բ. հանգրուան, սակայն կոլերու տարբերութիւնը ի նրպաստ Փերուի ըլլալով՝ քոսթա Ռիքացիք վերադարձան տուն։

Պոլիվիա եւ էքուատոր ֆուլթպոլի աշխարհին մէջ տակաւին կը մնան անծանօթներ։ Նման մրցաշարքերու ընթացքին անոնք տպաւորիչ ոչինչ կը ներկայացնեն։ Քոսթա Ռիքայի եւ Մեքսիքայի նման,

անոնք ալ առաջին հանգրուանի աւարտին հրաժեշտ տուին մրցաշարքին եւ վերադարձան հայրենիք։

Քոլոմպիա, առաջին հանգրուանին խմբակից ունենալով կազմակերպիչ երկիրը՝ Արժանթինը, յաջողեցաւ գրաւել իր խմբակին առաջին դիրքը։ Քոլոմպիացիք նոյնիսկ կոլ չստացան իրենց խմբակի մրցումներուն։ Յաղթանակ տանելով Քոսթա Ռիքայի եւ Պոլիվիոյ դէմ, եւ ճերմակ հաւասարութիւն մը արձանագրելով Արժանթինի հետ, անոնք դիւրութեամբ անցան Բ. հանգրուան։ Այս հանգրուանին, Փերուի կազմը մրցակից ունենալով, կ'ակնկալուէր որ քոլոմպիացիք հասնին կիսաւարտական։ Խաղը աւարտեցաւ առանց կոլերու։ Յետ երկարաձգման, Փերուի անակնկալ կազմը երկու անպատասխան կոլեր նշանակելով դուրս ձգեց Քոլոմպիան։

Չիլիի կազմը առաջին հանգրուանին տպաւորիչ մրցումներ կատարեց եւ գրաւեց իր խմբակին առաջին դիրքը։ Երկրորդ հանգրուանին մրցակից ունենալով Վենեզուելայի նման կազմ մը, չիլիցիք ապահոված կը կարծէին ըլլալ կիսա-

ւարտականի իրենց տոմար։ Վենեզուելացիք խանգարեցին անոնց հաշիւները։ Փարակուէյի նման կազմի մը հետ կոլերով հարուստ հաւասարութիւն մը արձանագրած, վենեզուելացիք առանց բարդոյթներու կրցան մրցիլ Չիլիի դէմ եւ յաղթել անոր։ Չիլիցիք գլխիկոր հեռացան մրցաշարքէն։

Պրագիլ վերակազմակերպուած խումբով մը կը ներկայանար մրցաշարքին եւ մասնագէտներ լաւ ակնկալութիւններ ունէին անոր երիտասարդ կազմէն։ Պրագիլցիք լաւ խաղարկութիւն ունե-

ցան կարգ մը մրցումներու ընթացքին, սակայն հեռու էին իրենց կախարդական-ցուցադրական այն խաղէն, որուն վարժուած են համակիրները: Անոնք յաղթեցին միայն թոյլ էքուատորին: Երկրորդ հանգրուանին, Փարակուէյի դէմ փենալթիններով պարտուելէ ետք, պրագիլցիք դուրս մնացին մրցաշարէն: Վերջին մրցումին անոնք արժանի էին յաղթանակի, սակայն անոնց կը պակսէր, ինչպէս նախորդ մրցումներուն, կոլ նշանակող մարզիկը:

Արժանթին, որ իբրեւ կազմակերպիչ կը նշկատուէր մրցաշարին գլխաւոր թեկնածուն, առաջին մրցումէն իսկ չտպաւորեց: Հակառակ Մեսսիի եւ անուանի այլ մարզիկներուն ներկայութեան, արժանթինցիք չկրցան գեղեցիկ ֆուլթպոլ ներկայացնել եւ համոզիչ արդիւնքներ արձանագրել: Առաջին հանգրուանը դժուարութեամբ յաղթահարելէ ետք, Բ. հանգրուանին անոնք մրցակից ունեցան ռիսերիմ «թշնամի» մը՝ Ուրուկուէյը: Փենալթինները եղան ի նպաստ հիւրերուն եւ Արժանթին իր երկրի մրցաշարին ամօթահար մնաց իր համակիրներուն առջեւ:

Մրցաշարի անակնկալ կազմերէն էր Փերուի կազմը: Հայազգի մարզիչ Սերժիօ Մարգարեանի ղեկավարութեամբ, Փերու յաջողեցաւ հասնիլ մինչեւ կիսաւարտական: Անձանօթ մարզիկներէ կազմուած այս խումբը բաւական համոզեց իր համակիրներն ու ֆուլթպոլասէրները, միշտ յուշելով որ անձանօթներն ալ ի վիճակի են յաջողութիւններու հասնիլ: Կիսաւարտականին, անոնք բուռն պայքար տարին Ուրուկուէյի դէմ, սակայն աւելի փորձառու ուրուկուէյցիք գիտցան յաղթանակի ճամբան: Փերու մրցեցաւ երրորդ դիրքի համար, մրցաշարի անակնկալ կազմին՝ Վենեզուելայի դէմ, եւ գրաւեց երրորդ դիրքը: Վենեզուելացիք կիսաւարտականին մրցեցան Փարակուէյի դէմ եւ միայն փենալթիններով տեղի տուին: Մրցաշարի ընթացքին անոնք արձանագրեցին վերջին տասնամեակներու իրենց լաւագոյն արդիւնքները:

Աւարտականին, Ուրուկուէյ-Փարակուէյ մրցումը եղաւ վերջին տարիներու հարաւային ամերիկայի հզօրագոյն կազմերուն միջեւ սպասուած ճակատումը: Ուրուկուէյցիք կը նկատուէին յաղթանակի գլխաւոր թեկնածուն եւ այդպէս ալ պատահեցաւ: Անոնք հանգիստ ու մեծ յաղթանակ մը արձանագրեցին իրենց դրացիին՝ Փարակուէյի դէմ եւ արդարօրէն տիրացան տիտղոսին: Այս յաղթանակը Ուրուկուէյի պարգեւեց տասնհինգերորդ տիտղոսը Քոփա Ամերիկայի մրցաշարին:



Մրցաշարի ընթացքին կարգ մը երկիրներու արձանագրած արդիւնքները անակնկալներ չէին: Պրագիլցիք եւ արժանթինցիք անցեալ տարի աշխարհի ախոյեանութեան ձախողութենէն ետք, նոր ձախողութիւն մը եւս արձանագրեցին, եւ պէտք է լրջօրէն պատրաստուին յաջորդ Մոնտիալին: Այս մակարդակով անոնք պարզապէս նոր ձախողութիւն մը եւս պիտի արձանագրեն: Մեքսիքացիք կատարեալ հիասթափութիւն պատճառեցին: Անցեալ Մոնտիալին տպաւորիչ մրցումներ ունենալէ ետք, այս մրցաշարին անոնք ներկայացան անկազմակերպ: Զիլիցիք նորութիւն չունեցան: Ո՛չ բարելաւում, ո՛չ ալ յետընթաց կար անոնց խաղին եւ արդիւնքներուն մէջ: Քոլումպիա կրնար աւելի յաջող արդիւնքներ արձանագրել:

Վերջապէս, Ուրուկուէյ եւ Փարակուէյ այս մրցաշարի ավարտականին հասնելով, ֆուլթպոլասէրներուն եւ մասնագէտներուն վերջիչեցուցին, թէ ափրիկեան Մոնտիալի ընթացքին իրենց արձանագրած դրական արդիւնքները պատահականութիւն կամ բախտ չէին: Մարզիչ Օսքար Թապարէզի կազմը բաւական տպաւորիչ եւ լաւ ձեւով կը պատրաստուի յաջորդ Մոնտիալին: Ուրուկուէյցիք շուրջ քառասուն տարի Պրագիլի եւ մանաւանդ Արժանթինի շուրջին տակ մնալէ ետք, այսօր նոր զարթօնք մը կ'ապրին ֆուլթպոլի աշխարհին մէջ: Այս առաջին յաջողութենէն ետք, ուրուկուէյցիք պիտի աշխատին նոյն յաջողութիւնը կրկնել 2014ին Պրագիլի մէջ կայանալիք Մոնտիալին եւ պիտի փորձեն փառքի օրերը վերագարձնել իրենց երկրին:





Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ ՅՅՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ԵՒ ՇՔԵՂ ՏՈՂԱՆՑՔԻՆ ԱՌԹԻԻՒՄ

# Հ.Մ.Ը.Մ.Ը ԱՊՐԵՑԱԲ ԵՒ ԱՊՐԵՑՈՒՑ

Գեորգ Պետիկեան  
ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ

**Ա**յն ժամանակ, որովհետև մինչև այն ատեն, որ Հ.Մ.Ը.Մ.ը մեր ժողովուրդի կեանքին մէջ ամէն օր եւ ամէն տեղ ներկայ է, ինք միշտ պիտի ապրի եւ միաժամանակ մեզ ալ պիտի ապրեցնէ իր հետ:

Այս բոլորը անոր համար, որ Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանէն ներս, Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին ներքեւ, բացառիկ յաջողութեամբ պսակուեցան Նաւասարդեան ՅՅրդ մարզախաղերը, որոնք իրենց աւարտին հասան Կիրակի, 3 Յունիս 2011ին, «Պրմինկհամ Հայ Աքոլ»ի հսկայ տարածքին վրայ: Մարզախաղեր, որոնք անօրինակ խանդավառութեան եւ ազգային հպարտութեան անմոռանալի պահեր ստեղծեցին գաղութահայերուն սիրտերուն մէջ, երկսեռ հազարաւոր անդամներու եւ համակիրներու ներկայութեամբ եւ մասնակցութեամբ:

Օրուան պատշաճ յայտագիրէն առաջ, Լարա Ղարիպեան իր մեներգներով խանդավառեց ներկաները:

Յիշենք, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսը 2011 տարին հռչակած էր «Հայ մանուկի տարի»: Մեկնելով այս իրողութենէն, դաշտ հրաւիրուեցան խումբ մը փոքրիկներ, որոնք շրջապատելով մեներգող Ղարիպեանը, օրուան մթնոլորտին տուին տարբեր երանգ:

Նախքան պաշտօնական յայտագրի սկսիլը, ներկաները հրաւիրուեցան



վայրկեան մը յոտնկայս լուրթեամբ յարգելու յիշատակը մեզմէ յաւէտ բաժնուած Հ.Մ.Ը.Մ.ականներուն, եւ յատկապէս այս տարի մահացած Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղի անդամ, Շրջանային Վարչութեան տարիներու անդամ եղբ. Կարպիս Շիրտմեանին:

Ապա, երեկոյեան ժամը ճիշտ սկսաւ յայտագրին պաշտօնական բաժինը:

Այսպէս, նախ շրջանի Սկաուտական Խորհուրդի առաջնորդութեամբ, մարզադաշտ առաջնորդուեցան Թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, 2011ի «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական» եղբ. Ռուբիկ Գուրճեան եւ իր կողակիցը, ընկերակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեանի:

Օրուան հանդիսավարներն էին քոյր Նորա Զափարեան (հայերէն) եւ եղբ. Տօնիկ Անտոնեան (անգլերէն), որոնք ներ-

կաները ոգեւորեցին յատուկ նշանախօսքերով եւ քաջալերական ու տպաւորիչ խօսքերով: Անոնք նաեւ ծանօթացուցին Նաւասարդեանն ու Հ.Մ.Ը.Մ.ի այս ափերու մեծ ընտանիքը:

Պէտք է շեշտել, որ Նաւասարդեան ՅՅրդ մարզախաղերը եզրափակող շաբաթավերջը (Յունիս 30-Յունիս 3) յատկանշուեցաւ երկսեռ երիտասարդութեան մը տիրական ներկայութեամբ, որ անգամ մը եւս եկաւ բոլորին մտքերուն մէջ դրոշմելու, թէ Հ.Մ.Ը.Մ.ը սփիւռքեան այն բացառիկ կազմակերպութիւնն է, որ հայ երիտասարդութեան սրտին կը խօսի:

Փակման հանդիսութեան դրօշակի տպաւորիչ արարողութիւնը կատարեց շրջանի արի-արեւոյշներէ կազմուած դրօշակակիրներու խումբը: Ոսկան Արիսեանի ղեկավարութեամբ եւ Շրջանային Վարչութեան շեփորախումբին ազգային եղանակներով, խումբը մար-





զադաշտ բերաւ Մ. Նահանգներու, Հայաստանի, Արցախի, Քալիֆորնիոյ, Հ.Մ.Ը.Մ-ի եւ Նաւասարդեան դրօշները, բարեւեց պատուով հիւրերուն եւ կատարեց դրօշակի արարողութիւնը՝ հետեւելով Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգներուն:

Ապա, օրուան հանդիսավարները ներկայացուցին պաշտօնական հիւրերը, որոնց կարգին էին Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Հայաստանի գլխաւոր հիւպատոսի ներկայացուցիչներ Հայկ Աւետիսեան եւ Վարդան Մկրեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան փոխատենապետ եղբ. Գօգօ Պալեան, Հ.Օ.Մ-ի Շրջանային վարչութեան ատենապետուհի Արուս Մելքոնեան, Հ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Գօգօ Թոփալեան, Ազգային Վարչութեան ներկայացուցիչ Ճորճ Զորպանեան, Նաւասարդեան Յճրդ մարզախաղերու պատուով նախագահ Ճորճ Ժամկոչեան, Քալիֆորնիոյ 29րդ շրջանի քոնկրետական էտրմ Շիֆ, Քալիֆորնիոյ 27րդ շրջանի քոնկրետական Պրէտ Շերմըն, Կլէնտէյլի հանրային վարժարաններու խնամակալ մարմնի անդամ Կրեկ Գրիգորեան, Կլէնտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Վազգէն Քհնյ. Աթմանեան, Պրոպէնքի քաղաքապետարանի բարձրատիճան պատասխանատու անդամներ, մարզախաղերու անցեալի «Տիպար Հ.Մ.Ը.Մ.-

ական»ներ, հիւրեր, ծնողներ, բազմահարիւր անդամներ եւ համակիրներ:

Յանուն Նաւասարդեան Յճրդ մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբին, ատենապետ եղբ. Մհեր Դաւիթեան իր խօսքին սկիզբը ողջունեց եւ շնորհակալութիւն յայտնեց Նաւասարդեան յանձնախումբերու հարիւրաւոր այն անդամներուն, որոնք ամիսներ շարունակ ձգնեցան եւ մասնակից դարձան այս մեծ յաջողութեան իրականացման:

Եղբ. Դաւիթեան գնահատելէ ետք Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութիւնը, իր երախտագիտութիւնը յայտնեց ներկաներուն՝ միութեան մեծ ընտանիքին հանդէպ իրենց ունեցած հաւատքին, սիրոյն եւ յարգանքին համար, ապա ան կոչ ուղղեց բոլորին գալու, միանալու եւ խտացընելու Հ.Մ.Ը.Մ-ի շարքերը:

Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեան իր

խօսքին մէջ շեշտեց, որ «պարծանք է ողջունել ձեզ՝ փակման այս շքեղ հանդիսութեան»: Ան յիշեց, որ 35 տարիներ առաջ, 250 մարզիկներու մասնակցութեամբ ծնունդ առած Նաւասարդեան մարզախաղերը այսօր կ'իրագործուին աւելի քան հինգ հազար մարզիկներով:

Եղբ. Աբրահամեան շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն նշելով, թէ «ձեր ներկայութիւնը ոգեւորում է մեզ բոլորս»: Ան երախտագիտական խօսքեր ուղղեց նաեւ բոլոր անոնց, որոնք իրենց կարելոր ներդրումը ունեցան Նաւասարդեան մարզախաղերուն իրականացման:

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անունով խօսք առաւ փոխատենապետ եղբ. Գօգօ Պալեան: Ան գնահատեց բոլոր համակիրները, անդամները եւ մարզիկները, որոնց շնորհիւ կարելի դարձաւ ազգային այս համախմբումը անգամ մը եւս յաջողութեամբ իրականացնել:

«Հ.Մ.Ը.Մ-ը նուիրուած է հայ մանուկին, պատանիին ու երիտասարդին ֆիզիքական ու ազգային դաստիարակութեան», շարունակեց ան ու հաստատեց, որ «հոն ուր հայ երկսեռ երիտասարդութիւն կայ, հոն անպայմանօրէն կայ նաեւ Հ.Մ.Ը.Մ.»:

Իր հայրական օրհնութիւններն ու շնորհաւորանքները փոխանցելու եւ Նաւասարդեան Յճրդ մարզախաղերու առթիւ Արամ





Ա. Կաթողիկոսին գնահատանքի եւ օրհնութեան գիրը ընթերցելու համար, Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, ընկերակցութեամբ եղբ. Գառնիկ Աբրահամեանի եւ Վազգէն Քհնյ. Աթմաճեանի, բեմ հրաւիրուեցաւ:

Առաջնորդը օրհնութեան գիրին ընթերցման առթիւ ներկաները հրաւիրեց յոտնկայս ունկնդրութեան, որմէ ետք ան բնագիրը յանձնեց եղբ. Աբրահամեանի եւ իր գոհունակութիւնը յայտնեց պատմական այս պահուն ներկայ գրտնուելուն համար:

«Նաւասարդեան այս խաղերը հպարտութեան եւ ցնծութեան առիթ են բոլորիս համար: Մեր մանուկները մեր վաղն են ու մեր ապագան», յայտնեց ան:

Առաջնորդը շեշտեց նաեւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը գաղութներու կեանքին մէջ ունի տիպար Հ.Մ.Ը.Մ.ական, հայ մարդ եւ քաղաքացի պատրաստելու յըստակ առաքելութիւն:

Ապա, յաջորդաբար ելոյթ ունեցան քոնկրետական Էտրմ Շիֆ եւ Պրէտ Շերմըն, որոնք իրենց սրտի խօսքերուն մէջ շնորհակտրեցին Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 36րդ մարզախաղերը եւ բարձր գնահատեցին հայ երիտասարդութիւնը մաքուր միջավայրի մէջ համախմբելու եւ անոր օգտակար ծրագիրներ հրամցնելու

միութեան առաքելութիւնը: Այս առիթով անոնք նորանոր յաջողութիւններ մաղթեցին Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին:

Իր կարգին, քոնկրետական Շերմըն ատենապետ եղբ. Աբրահամեանին յանձնեց Ուաշինկթընի Ներկայացուցչական Տան գմբէթին ծածանող ամերիկեան դրօշակ մը, առ ի երախտագիտութիւն եւ գնահատանք:

Խրախուսական եւ իմաստալից պատգամներէն ետք, սկսաւ այնքան սպասած Նաւասարդեան տողանցքը:

Շրջանային Վարչութեան հովանաւորած շեփորախումբին ազգայնաշունչ եւ ոգեւորիչ եղանակներով, Հ.Մ.Ը.Մ.ականի յատուկ հպարտութեամբ եւ ինքնվստահութեամբ, տողանցեցին Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգնե-

րու 18 մասնաճիւղերը իրենց վարչական, սկաուտական եւ մարզական կազմերով: Անոնք հսկայ մարզադաշտը վերածեցին փոքրիկ եւ հարազատ հայրենիքի մը, միաժամանակ ներկաներուն շնորհելով անսովոր խանդավառութիւն:

Տողանցող բոլոր մասնաճիւղերը պատշաճօրէն բարեւեցին պատուոյ հիւրերուն եւ գիրենք խրախուսող ծովածաւալ բազմութեան, ապա իրենց նշանակուած տեղերը գրաւեցին մարզադաշտին վրայ:

Աւանդական այս շքերթ-տողանցքը սկսաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղով եւ իր աւարտին հասաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արարատ մասնաճիւղով:

Գեղեցիկ եւ նոյնքան ալ տպաւորիչ էր տեսնել, թէ ինչպէս «Արարատ» մասնաճիւղի կրտսեր անդամները յուշանուէր մը կը յանձնեն իրենց մասնաճիւղի երկար տարիներու անդամ, 2011ի «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ի տիտղոսին արժանացած եղբ. Ռուբիկ Գուրճեանին:

Շեփորախումբի եղանակներուն կշռոյթով տողանցող Հ.Մ.Ը.Մ.ական մեծ ու փոքր թիւով վարչական կազմերը, իրենց մարզիկները, սկաուտները, արենոյճները, արծուիկներն ու գայլիկները, անմահ



ցեղի ժառանգորդներուն յատուկ իրենց փառահեղ տողանցքին ընթացքին, կրկին անգամ յուզեցին ներկաները, որոնք իրենց հոգիէն ժայթքող ուրախութեան ու երջանկութեան բացականչութիւններուն մէջէն տեսան վաղուան հայութիւնը:

Օրուան հանդիսավարները գնահատական խրախուսիչ արտայայտութիւններով ներկայացուցին մասնաճիւղերը եւ անոնց ներկայ պատկերը:

Տողանցքին աւարտին յանձնուեցան Նաւասարդեան մարզախաղերու գլխաւոր առանցքը հանդիսացող մարզական մրցումներու ախոյեանութեան բաժակները: Յաղթական մասնաճիւղերուն բաժակներ յանձնեցին Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Գօգօ Պալեան, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Աբրահամեան եւ 2011ի «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ի տիտղոսին արժանացած եղբ. Ռուբիկ Գուրճեան:

Այնուհետեւ, իրենց զաւակներուն տողանցքը վայելած հանդիսականները, հոգեկան մեծ գոհունակութեամբ տեղափոխուեցան փառատօնի շրջափակը՝ մասնակցելու համար Նաւասարդեան մարզախաղերը եզրափակող փառատօնի աւարտական յայտագիրին, որուն ընթացքին ելոյթ ունեցան մեծաթիւ երգիչներ:

Յայտագրի վերջին երգիչն էր Յարութ Փամպուլճեան, որ իր ճոխ երգերու փունջով աննախընթաց ուրախ մթնոլորտ մը ստեղծեց մարզկային ծովու վերածուած փառատօնին շրջափակը, ուր Նաւասարդեան խրախճանքը շարունակուեցաւ մինչեւ կէս գիշեր:

Անկասկած, որ Կիրակի, 3 Յունիս 2011ին, հարիւրաւոր հայորդիներ ապ-



րեցան աւանդական դարձած այս մարզախաղերուն ստեղծած անօրինակ խանդավառութիւնը, հպարտանքով եւ յուզականութեամբ:

Այս ձեւով

## ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ 36ՐԳ ՄԱՐԶԱԽԱՂ ԵՐՈՒ ԳԼԽԱԽՈՐ ԱՐԳԻՒՆՔՆԵՐԸ

**ԼՈՂ**

1. Հ.Մ.Ը.Մ.ի Լա Քրեսենթա Հովիտի «Շանթ» մասնաճիւղ
2. Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆեռնանտո Հովիտի «Մասիս» մասնաճիւղ
3. Հ.Մ.Ը.Մ.ի Սանթա Գլարայի «Անի» մասնաճիւղ

**ԹԵԹԵԻ ԱԹԼԵԹ**

1. Հ.Մ.Ը.Մ.ի Սաութ Պէյի «Արագած» մասնաճիւղ
2. Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտլի «Արարատ» մասնաճիւղ
3. Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆեռնանտո Հովիտի «Մասիս» մասնաճիւղ

**ԹԵՆԻՍ**

1. Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտլի «Արարատ» մասնաճիւղ
2. Հ.Մ.Ը.Մ.ի Օրէնճ Քաունթի «Սարդարապատ» մասնաճիւղ
3. Հ.Մ.Ը.Մ.ի Ֆրեզնոյի «Սասուն» մասնաճիւղ

**ՓԻՆԿ-ՓՈՆԿ**

1. Հ.Մ.Ը.Մ.ի Պըրպէնքի «Սիփան» մասնաճիւղ
2. Հ.Մ.Ը.Մ.ի Օրէնճ Քաունթի «Սարդարապատ» մասնաճիւղ
3. Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտլի «Արարատ» մասնաճիւղ

**ՎՈԼԻՊՈԼ**

1. Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտլի «Արարատ» մասնաճիւղ
2. Հ.Մ.Ը.Մ.ի Սանթա Գլարայի «Անի» մասնաճիւղ
3. Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆեռնանտո Հովիտի «Մասիս» մասնաճիւղ

**ՖՈՒԹՊՈԼ**

1. Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտլի «Արարատ» մասնաճիւղ
2. Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղ
3. Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղ

**ՊԱՍՔԵԹՊՈԼ**

1. Հ.Մ.Ը.Մ.ի Կլէնտլի «Արարատ» մասնաճիւղ
2. Հ.Մ.Ը.Մ.ի Լոս Անճելըսի մասնաճիւղ
3. Հ.Մ.Ը.Մ.ի Սան Ֆեռնանտո Հովիտի «Մասիս» մասնաճիւղ

Հ.Մ.Ը.Մ.ը վերակենդանացուց իր անցեալի անթառամ յիշատակները եւ այդ տրամադրութեամբ հրպարտանք փոխանցեց ներկաներուն:

Այլ խօսքով, Հ.Մ.Ը.Մ.ը ապրեցաւ եւ ապրեցուց:

Նաւասարդեան Յճրդ մարզախաղերը սովորական նշում մը չեղան, այլ՝ յաղթական նոր երթի մը նախաքայլ եւ յանձնառութիւն՝ շարունակելու սրբազան առաքելութիւնը:

Շատեր իբրեւ ուխտաւոր եկած էին իրենց սիրտն ու հոգին կապելու այդ պատմութեան եզակի, սակայն հաստատ ինքնագոհութեամբ մը:

Մեր մաղթանքն է, որ Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր մարզիկները, սկառուտները, արենոյճները, արծուիկներն ու գայլիկները, անմահ ցեղի ժառանգորդներու յատուկ ներկայութեամբ շարունակեն իրենց հաստատ ու վստահ քայլերը դէպի փայլուն ապագայ:



# «ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻ ՏԱՐՈՒԱՆ» ՆՈՒՒՐՈՒԱԾ ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ՝ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ

Րաֆֆի Սիլահեան  
Հալեպ

«**Հ**այ Մանուկի Տարուան» առիթով, Հ.Մ.Ը.Մ-ի Հալեպի մասնաճիւղի վարչութեան եւ Սկաուտ-Նորհուրդին հովանաւորութեամբ, «Գրիգոր Յակոբեան» գայլիկ եւ արծուիկ միաւորները կազմակերպեցին յատուկ հանդիսութիւն մը, որ տեղի ունեցաւ Կիրակի, 31 Յուլիս 2011ին, «Աղաճանեան» սրահին մէջ:

Հանդիսութեան ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային ըՍկաուտ-Նորհուրդն ու խմբապետութիւնը, Հ.Մ.Ը.Մ-ի Հալեպի մասնաճիւղի վարչութիւնն ու Սկաուտ-Նորհուրդը, միութիւններու եւ Ազգ. վարժարաններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ՝ մեծաթիւ ծնողներ ու Հ.Մ.Ը.Մ-ականներ:

Սուրիոյ եւ Հայաստանի քայլերգներէն ետք, հայերէն լեզուով բացման խօսքը արտասանեց «Գրիգոր Յակոբեան» արծուիկ միաւորի պատասխանատու՝ խմբապետուհի Սեւան Պազարճեան, իսկ արաբերէն լեզուով հանդէս եկաւ գայլիկ միաւորի պատասխանատու՝ փոխ խմբապետ եղբ. Յովհաննէս Փամփալեան:

Հանդիսութեան գեղարուեստական յայտագիրը սկսաւ գայլիկներու եւ արծուիկներու երգչախումբին կատարողութեամբ: Երգչախումբը երգեց «Հայ կամաւորներ», «Սուրիա», «Գայլիկ եմ Հ.Մ.Ը.Մ-ի», «Սերոբ Աղբիւր» եւ «Արիւնոտ դրօշ» երգերը, ղեկավարութեամբ՝ քոյր Հուրի Ղազարեանի: Ապա, կարմիր վոհմակի եւ երամի եղբայրներն ու քոյրերը ներկայացուցին հայկական պար մը, իսկ կապոյտ վոհմակը եւ երամը կատարեցին արաբական պար մը: Գայլիկ եւ արծուիկ միաւորներու միամեայ գործունէութեան տեղեկագիրը ընթերցեց արծուիկ միաւորի փոխ պատասխանատու՝ քոյր Ալին Սիմոնեան, որմէ ետք գեղարուեստական յայտագիրը եզրափակուեցաւ չափական մարզանքով:

Սիմոնեան, որմէ ետք գեղարուեստական յայտագիրը եզրափակուեցաւ չափական մարզանքով:

Այնուհետեւ, վոհմակներն ու երամները բեմ բարձրացան՝ վկայականներու բաշխման եւ աստիճանատուչութեան արարողութեան համար: Այս առիթով, մասնաճիւղի Սկաուտ-Նորհուրդի խօս-



քը փոխանցեց մասնաճիւղի խմբապետ եղբ. Բաֆֆի Սիւլահեան: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի առաքելութեան եւ նորահաս սերունդներու դաստիարակութեան՝ ըսելով, թէ «Հ.Մ.Ը.Մ.ը հիմնուած օրէն եղաւ դպրոց, որ հայ մանուկին սորվեցուց հաւատարմութիւն Աստուծոյ, ազգին ու հայրենիքին:

Շարունակելով, եղբայրը հաստատեց, որ 93 տարիներու ընթացքին, հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան մէջ, Հ.Մ.Ը.Մ. եղաւ հայակերտման բերդ եւ ազգապահպանման պարիսպ: Հայ մանուկին համար ան դարձաւ ազգային դաստիարակութիւն ջամբող կրթարան»: Եղբայրը իր խօսքին մէջ նշեց նաեւ, որ մեր առօրեայ կեանքին մէջ, մանուկներու ներկայութիւնը մեզի կու տայ փայլուն ապագա-



յի կերտման հեռանկարը, որովհետեւ կեանքը առանց մանուկներու կ'ըլլայ մութ, անոնց ներկայութիւնն է որ կը լուսաւորէ կեանքի ճանապարհը:

Ապա, խօսք առաւ Խորէն Քհնյ. Պէրթիզեան: Մանուկներու տօնը շնորհաւորելէ ետք, ան ըսաւ. «Դաստիարակութիւնն է որ կ'երաշխաւորէ հայ մանու-

կի լուսաշող ապագան: Հ.Մ.Ը.Մ.ը «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանով իր դռները բացաւ՝ հայ մանուկէն պատրաստելու համար ապագայի աշխոյժ, կայտառ դեկավարը: Քահանայ հայրը նշեց, թէ Արամ Ա. Կաթողիկոսին կոչը կ'ըսէ՝ «վերածենք բառը խօսքի, խօսքը գործի, գործը ծառայութեան եւ ծառայութիւնը յարութեան աղբիւրի»: Առ այդ, ան ըսաւ, որ մեզմէ իւրաքանչիւրին պարտքն է պատրաստել ուղղամիտ, պայծառ ապագայ կերտող անհատներ՝ մեր վերելքը շարունակելու համար դէպի լուսաշող ապագայ:

Հանդիսութիւնը փակուեցաւ քահանայ հօր «Պահպանիչ»ով եւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

with the complements of

# Restaurant Al-Mayass



# ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒ ԼԻՐԱՆԱՆԱՀԱՅ ՄԻԱՑԵԱԼ ՄԱՐՄՆԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ

## ԼԻՐԱՆԱՆԱՀԱՅ ՄԱՐԶԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ Ի ՆՊԱՍՏ

**Լ**իբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեանի հովանաւորութեամբ եւ Լիբանանի մօտ Հայաստանի դեսպան Աշոտ Քոչարեանի նախագահութեամբ, 24 Յունիս 2011ի երեկոյեան, Ազգ. Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ տեղի ունեցաւ համահայկական խաղերու լիբանանահայ միացեալ մարմնին (Հ.Մ.Ը.Մ., Հ.Մ.Մ., Հ.Ե.Ը.) ճաշկերոյթը՝ ի նպաստ խաղերուն մասնակցող լիբանանահայ մարզական պատուիրակութեան:

Ճաշկերոյթին բացման խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան: Եղբայրը նշեց, որ համահայկական հինգերորդ խաղերուն Լիբանանը կը մասնակցի պասքեթպոլի, մինի ֆուտպոլի եւ աթլետիքի խումբերով: «Հաւատալով, որ միացեալ ուժերով կրնանք յաղթահարել ամէն դժուարութիւն, կը հաստատենք, որ այսօրուան ձեռնարկին կայացումը ինքնին առաջին նախաքայլն է մեր յաջողութեան», շեշտեց ան:

Երկրորդ խօսքը արտասանեց Հ.Մ.Մ.ի ներկայացուցիչ Միսաք Նաճարեան: Արաբերէն իր խօսքին մէջ ան ըսաւ, որ մարզական իրադարձութիւնները կը նրկատուին շատ կարեւոր, որովհետեւ անոնք առիթ կը դառնան, որ մարդիկ իրարու հետ ապրին համերաշխօրէն: «Չորս տարին անգամ մը տեղի ունեցող այս խաղերը իրենց տեսակին մէջ իսկապէս կը նկատուին իւրայատուկ, որովհետեւ կու գան յաւելեալ փայլք տալու Հայաստանին», նշեց Նաճարեան:

Խօսք առաւ նաեւ համահայկական խաղերու միացեալ մարմնի ատենապետ եղբ. Նշան Համամճեան: Ան ըսաւ, որ առանցքային նշանակութիւն ունեցող լիբանանահայութիւնը չի կրնար լուռ մնալ հայրենիքի գանազան կոչերուն եւ հրաւերներուն: Լիբանանահայութիւնը միշտ կազմ ու պատրաստ ներկայութիւն պէտք է ըլլայ հայրենիքի կազմակերպած համահայկական ձեռնարկներուն՝ ոչ միայն յաւելեալ փայլք տալու համար անոնց, այլեւ՝ Սփիւռք-Հայաստան կապերը սերտացնելու եւ զարգացնելու համար:

Շարունակելով, եղբ. Համամճեան ըսաւ, որ համահայկական խաղերու լիբանանահայ միացեալ պատուիրակութիւնը պիտի բաղկանայ 60 մարզիկներէ, որոնք հայրենիքի մէջ իրենց արձանագրած պատուաբեր արդիւնքներով մեր կուրծքերը ուրախութեամբ պիտի լեցնեն եւ գաղութին անունը բարձր պահեն:

Կազմակերպական աշխատանքները ընթացք առած են ամիսներէ ի վեր, - դիտել տուաւ եղբ. Համամճեան, - կը մնայ նիւթականի ապահովման հարցը, որուն համար կազմակերպուած է ճաշկերոյթը: Նախատեսուած է 60 հազար տոլարի գումար մը, որ հազիւ կը բաւարարէ պատուիրակութեան անմիջական ծախսերը:

Յաջորդ խօսքը արտասանեց Լիբանանի մօտ Հայաստանի դեսպանի ներկայացուցիչ Վարդան Ադամեան: Ան ողջունեց լիբանանահայ մարզական պատուիրակութիւնը եւ յայտնեց, որ թէեւ իւրաքանչիւր երկրի պատուիրակութեան մարզիկները պիտի պայքարին տիտղոսին կամ առաջին երեք դիրքե-

րուն տիրանալու համար, սակայն, ինչ ալ ըլլան արդիւնքները, խաղերուն բոլորին մասնակցութիւնը կը նշանակէ, թէ բոլորն ալ կը նկատուին յաղթական, որովհետեւ հայութիւնն է ի վերջոյ յաղթականը:

Յաջորդեց համահայկական խաղերու կեդրոնական մարմնի փոխ նախագահ եղբ. Ստեփան Տէր Պետրոսեանի խօսքը: Ան հաստատեց, որ խաղերու կազմակերպչական աշխատանքները բաւական դժուար են, սակայն ամէն ճիգ ի գործ կը դրուի յաղթահարելու համար բոլոր ձեւի դժուարութիւնները: Եղբ. Տէր Պետրոսեան յոյս յայտնեց, որ օրին մէկը, յուսանք մօտիկ ապագային, բոլորին մասնակցութիւնը այս խաղերուն ըլլայ ամբողջութեամբ ձրի, եւ մասնակցող պատուիրակութիւնները ստիպուած չըլլան վճարելու իրենց ճանապարհածախսը եւ Հայաստան կեցութեան գումարը:

Հուսկ, ճաշկերոյթին եզրափակիչ խօսքը արտասանեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեան: Ան ըսաւ, որ համահայկական խաղերու մասնակցիլը կարեւոր կը նկատուի: Աշխարհի տարբեր ցամաքամասերէն բոլորիս մայրաքաղաքը՝ Երեւան գացող հայորդիները պէտք է ցոյց տան, որ ասիկա սովորական մրցաշարք մը չէ, այլ՝ հայրենիքին նկատմամբ իրենց սէրը եւ նուիրումը արտայայտելու միջոց մը: Այս խաղերը ցոյց կու տան, որ ինչ



ալ ըլլան հեռաւորութիւնները, մայր հայրենիքի կանչը կը համախմբէ բոլորը եւ կը միաձուլէ զանոնք իր մէջ:

Առաջնորդը շեշտեց, որ մեզ հետաքրքրողը այն չէ, թէ ո՞վ պիտի յաղթէ կամ տիտղոսի տիրանայ: Մեր փափաքն է բոլոր մասնակցողներն ալ անխտիր յաղթական հռչակել, որովհետեւ այս խաղերը պէտք է ըլլան հայապահպա-

նութեան ախոյեանութիւն:

Յայտնենք, որ ճաշկերոյթին գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին ջութակահար Առաքել Միքայէլեան եւ երգչուհի Գարմէն Աճէմեան: Այս առիթով տեղի ունեցաւ կարկանդակի հատում եւ վիճակահանութեան վաճառք:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԻ ՄԸ ԸՆԹԱՑՔԻՆ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ՝

## ՍԵՐՊ ՃՈՐՃ ՓԵԹՐՈՎԻՉ ՊԱՍՔԵԹՊՈՒԻ ՏՊՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԽՈՒՄԲԻ ՄԱՐԶԻՉ

### Թղթակից ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏ

**7** Յունիս 2011ի յետմիջօրէին, «Հ.Մ.Ը.Մ.-Աղբալեան» մարզամշակութային համալիրին մէջ տրուած մամլոյ ասուլիսի մը ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը ներկայացուց պասքեթպոլի տղոց ներկայացուցչական խումբին նոր մարզիչը՝ սերպ Ճորճ Փեթրովիչը:

Մամլոյ ասուլիսին ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամները, Լիբանանի Ողիմպիականի Կոմիտէի անդամ եւ Լիբանանի հեծելարչաւի Ֆետերասիոնի նախագահ եղբ. Վաչէ Ծատուրեան, Լիբանանի պասքեթպոլի ֆետերասիոնի անդամ եղբ. էլի Սրապոնեան, Հ.Մ.Ը.Մ.Ի պասքեթպոլի տղոց ներկայացուցչական խումբի գլխաւոր հովանաւոր՝ «Զարտման» ընկերութեան սեփականատէրերէն Կի Մանուկեան, լիբանանցի լրագրողներ եւ հրատարակիչներ:



www.aztagdaily.com  
photo by Ashnag



www.aztagdaily.com  
photo by Ashnag

Լիբանանեան քայերգի ունկնդրութենէն ետք, օրուան խօսքը արաբերէնով փոխանցեց Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան: Ան ըսաւ, որ «Այսօր, Հ.Մ.Ը.Մ-ի պասքեթպոլի տղոց ներկայացուցչական խումբին համար կը բացուի նոր էջ մը, իր նոր մարզիչին՝ սերպ Ճորճ Փեթրովիչին հետ: Անոր հետ պիտի սկսինք մեր փայլուն ապագային առաջին էջը բանալ եւ անոր ընդմէջէն զօրակցիլ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին: Իր հիմնադրութենէն՝ 1924էն ի վեր, Հ.Մ.Ը.Մ-ը հանդիսանայ լիբանանեան մարզաշխարհին մէկ կարեւոր մասնիկը, որ միշտ բարձր կը պահէ Հ.Մ.Ը.Մ-ի եւ լիբանանեան դրօշները՝ տեղական թէ միջազգային գետնի վրայ: Հ.Մ.Ը.Մ-ին նորանոր յաջողութիւններ մաղթելէ բացի, վստահ ենք, որ ան յառաջիկայ տարեշրջանի աւարտին պիտի բարձրանայ Ա. դասակարգ, որ իր իսկական տեղն է»:

Խօսքին աւարտին, եղբ. Քէշիշեան մարզիչ Փեթրովիչին նուիրեց խումբին շապիկը, որուն վրայ գրուած էր անոր անունը:

Երկրորդ խօսք առնողը եղաւ նոր մարզիչ Փեթրովիչ, որ

ըսաւ. «Որքան տեղեակ եմ, Հ.Մ.Ը.Մ. Լիբանանի պատմութեան մէջ իր անունը արձանագրած է ոսկի տառերով՝ գրեթէ բոլոր մարզաձեւերու մէջ: Այժմ ես նշանակուած եմ մարզիչ եւ խումբը լաւապէս պատրաստելու պարտականութիւնը ունիմ: Ինչ ալ ըլլան պայմանները, իմ կարելիս պիտի ընեմ խումբին հետ հանդիսանալու Բ. դասակարգի ախոյեան եւ 2012-2013 տարեշրջանին ամէն զնով մաս կազմելու Ա. դասակարգին: Կը յուսամ, որ ձեր յոյսերը ի դերեւ չեմ հաներ»:

Վերջին խօսք առնողը եղաւ Կի Մանուկեան, որ ըսաւ. «Նախ եւ առաջ, Մանուկեան եղբայրներուն կողմէ եւ «Զարտման» ընկերութեան միջոցով, յաջողութիւն կը մաղթենք Հ.Մ.Ը.Մ-ին՝ իր նոր մարզիչին հետ: Խումբին գլխաւոր հովանաւորը ըլլալը մեզի համար մեծ պատիւ է, որովհետեւ այն ինչ որ մեզի Հ.Մ.Ը.Մ-ը տուաւ, այսօր կը վերադարձնենք զայն: Ինծի համար Հ.Մ.Ը.Մ-ը ամէն բանէ վեր կը մնայ, որովհետեւ տասը տարեշրջան անոր շապիկը կրելով եւ Ա. դասակարգի պասքեթպոլի ախոյեանութեան մրցումներուն մասնակցելով կը զգամ, թէ ինչ կը նշանակէ Հ.Մ.Ը.Մ.: Այս առիթով կու գամ յայտարարելու, որ Հ.Մ.Ը.Մ-ը իր նոր տարեշրջանին պիտի սկսի իր նախկին մարզիկներէն Երուանդ Աւագեանի եւ Մարիօ Ապպուտի հետ»:

Շարունակելով, Կի Մանուկեան հաւաստեց, որ 2011-2012 տարեշրջանին Հ.Մ.Ը.Մ-ի տղաքը պիտի հանդիսանան Բ. դասակարգի ախոյեան, իսկ տարեշրջան մը ետք՝ Լիբանանի ախոյեան»:

Այնուհետեւ հարցումներ ուղղուեցան թէ՛ նոր մարզիչին եւ թէ՛ Կի Մանուկեանին, որոնք Հ.Մ.Ը.Մ-ի համակիրներուն թելադրեցին մէկ բան. սպասել՝ տեսնելու համար անցեալի զօրաւոր Հ.Մ.Ը.Մ-ը:



Պասքեթպոլի տղոց ներկայացուցչական խումբը իր նոր մարզիչին, Կի Մանուկեանին եւ Շրջանային վարչութեան անդամներուն հետ:  
www.aztagdaily.com  
photo by Ashnag



# «ԱՐԱՐԱՏԵԱՆ» ԿԱՐԳԻ ՅՈՒՇԱՄԵՏԱԼՆԵՐՈՒ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ ԼԻՔԱՆԱՆԻ ՄԷՋ

Թղթակից  
ՊԵՅՐՈՒԹ



Մ.Լ.Մ-ի Կեղրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ եւ Լիբանանի Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ, Չորեքշաբթի, 29 Յունիս 2011ի երեկոյեան, Հ.Մ.Լ.Մ-ի Պէյրուսի աւուրին մէջ տեղի ունեցաւ շրջանի նախկին ընդհանուր խմբապետներու եւ խմբապետուհիներու «Արարատեան» կարգի յուշամետալներու տուչութիւնը, յիշատակելի հանդիսութեամբ մը, որուն ներկայ գտնուեցան Հ.Մ.Լ.Մ-ի Կեղրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան, Կեղրոնական Վարչութեան սկաուտականի ներկայացուցիչ եղբ. Կարպիս Գապասագալեան, Հ.Մ.Լ.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամներ եւ հրաւիրեալներ:

Հանդիսութեան բացման խօսքը արտասանեց Հ.Մ.Լ.Մ-ի Լիբանանի Շրջան-

ային Վարչութեան անդամ քոյր Մարթագեան: Ան ըսաւ, որ «Արարատեան» կարգի տուչութեան համար Հ.Մ.Լ.Մ-ի Կեղրոնական Վարչութիւնը շրջաններուն կատարած է համապատասխան թելադրանքներ, որպէսզի անոնք ըստ այնմ իրականացնեն այս աշխատանքը: Քոյրը նշեց, որ Լիբանան եւս նկատի առնելով ճշդուած պայմանները, հրաւիրեց զանոնք ամբողջացնողները, որպէսզի կատարուի «Արարատեան» կար-

ըն դուրս գտնուելուն պատճառով նամակով մը խնդրած է պարագան նկատի ունենար:

Ապա, խօսք առաւ Հ.Մ.Լ.Մ-ի Կեղրոնական Վարչութեան ատենադպիր եւ սկաուտականի ներկայացուցիչ եղբ. Կարպիս Գապասագալեան: Ան անդրադարձաւ Հ.Մ.Լ.Մ-ի կեանքին մէջ սկաուտ խմբապետներու ունեցած ազգակերտ ու կարեւոր դերակատարութեան՝ դիտել տալով, որ առանց երեւելու աշխատանք կատարելը հիմք կը հանդիսանայ խմբապետներու առաքելութեան, «գործել առանց փողի ու թմբուկի, սակայն գործել ազգու կերպով»:

Եղբ. Գապասագալեան խօսեցաւ «Արարատեան» կարգին եւ անոր տուչութեան մասին՝ բացատրելով, որ անիկա սկաուտական կեանքին մէջ բարձրագոյն կարգն է, որ կը տրուի Հ.Մ.Լ.Մ-ի սկաուտական «համալսարանին» մէջ: Վերջին քառամեակին տարբեր առիթներով խօսուած է այս կարգին մասին, Հ.Մ.Լ.Մ-ի բարձրագոյն ժողովներուն անիկա քննարկումի նիւթ դարձած է՝ յատկապէս այն պատճառով, թէ որով պէտք է տալ այս կարգը,





նկատի ունենալով պարագան անոնց, որոնք դասընթացքի պիտի չհետեւին, որովհետեւ գետնի վրայ աշխատանք չեն տանիր այլևս: Այս իմաստով ան նշեց, որ կարելի չէ ըսել, թէ կարգը կը տրուի վաստակաւորներուն միայն, որովհետեւ վաստակաւորներու փաղանգին մէջ կան մեծ թիւով քոյրեր եւ եղբայրներ, եւ վաստակ հասկացողութիւնը կարելի չէ բնորոշել: Ուստի, շարունակեց եղբ. Գապասագալեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը որոշեց «Արարատեան» կարգի յատուկ յուշամետալներ եւ վկայագիրներ յանձնել իբրեւ Շրջանային Ընդհանուր

Խմբապետ եւ Շրջանային Խմբապետ-Խմբապետուհի գործած եղբայրներուն ու քոյրերուն:

Շարունակելով, եղբ. Գապասագալեան յայտնեց, որ սկաուտական կեանքին մէջ, յատկապէս սերունդներու պատրաստութեան իմաստով, մեծ դերակատարութիւն ունեցած է Լիբանանի շրջանը, սակայն «Արարատեան» կարգի տուչութեան պարագային նկատի առնուած է ճշդուած պայմանը:

Եղբ. Գապասագալեան «Արարատեան» կարգին մէջ ամփոփուած նկատեց երախտագիտութիւնը սերունդներ կերտած անձերու նկատմամբ, Արարատ լե-

րան խորհուրդը, որ մնայուն ներկայութիւն է հոգիներուն մէջ Հ.Մ.Ը.Մ.ականներուն, որոնք առանց Արարատը տեսնելու զայն կենդանի պահած են իրենց էութեան մէջ:

Այնուհետեւ, եղբ. Կարպիս Գապասագալեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան կատարեցին «Արարատեան» կարգի վկայագիրներու եւ յուշամետալներու յանձնում հետեւեալ քոյրերուն եւ եղբայրներուն.- Յասմիկ Մուրատեան, Սեդա Պէշլեան, Ճոնի Արեւեան, Հրայր Մարգարեան, Րաֆֆի Կէօփօղլանեան եւ Վաչէ Նաճարեան:



www.aztagdaily.com photo by Ashnag

## Հ.Մ.Ը.Մ.Ի ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԻ ՄԱՍՆԱՃԻՒԴԻ ՄԿԱՈՒՏՆԵՐ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻՆ ԴՄՆԻԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՇԱԲԹՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՀԵԾԵԼԱՐՇԱԲԻՆ

### Արփի Մանկասարեան ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏ

**Դ**անիական մշակութային շաբթուան առիթով կազմակերպուած ձեռնարկներու շարքին, կարեւոր տեղ գրաւեց «Հեծանիւի օր»ը: Դանիացի ժողովուրդին 30 առ հարիւրը, ներառեալ՝ նախարարներ, իրենց առօրեայ տեղափոխութեան համար կ'օգտագործեն հեծանիւ, ինչ որ կը նըպաստէ վառելանիւթի եւ խնայողութեան, ապականումէ խուսափումին եւ մարդու առողջութեան:

Պուրճ Համուտի քաղաքապետութիւնը ընդառաջեց Դանիոյ դեսպանին վերոյիշեալ իմաստալից եւ օրինակելի կոչին:

Կազմուեցաւ 90 հոգիի հասնող հեծելանւորներու խումբ մը, որ հանդարտօրէն քշելով Պուրճ Համուտի փողոցներէն հասաւ «Պիէլ»ի համալիր:

Հեծելարշաւին մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի սկաուտներու փոքր ու պատանի 50 անդամներ: Խումբին առաջնորդութիւնն ու անվտանգութիւնը կամաւոր կերպով ստանձնեց արհեստավարժ հեծելանւորներու «Կրին» խումբը, որ հեծելարշաւի ամբողջ ընթացքին զգուշացուց ճամբան երթեւեկող ինքնաշարժները եւ ապահովեց քառուղիները: Ներկայ էր Լիբանանահայ Օգնութեան Խաչի շտապ օգնութեան անձնակազմը՝ իր ինքնաշարժով բերելով անհրաժեշտ օգնութիւն:

«Պիէլ»ի մէջ, Դանիոյ դեսպան Եան Թոփ Քրիսթընսըն միացաւ հեծելանիւի խումբին եւ բոլորը միասին կատարեցին ծովեզերեայ պտոյտ մը:



Էլիզապեթ Սիսեռեան  
ՓԱՐԻՉ



**Ա**րդէն ամիսներ առաջ սկսանք մտահոգուիլ...: «Մկառուտի օր»ը տեղի պիտի ունենայ Մայիս 22ին: Անցեալ տարուան ձեռնարկը յաջող էր, թատերական ներկայացում մը հրամցուած էր հանդիսատեսներուն: Այս տարի ի՞նչ ընենք, որպէսզի որակ եւ մակարդակ պահենք: Գրադարանէն գիրքեր իջանելան, կարծիքներ հարցուեցան, խրատներ տրուեցան: Վերջապէս, ամիսներու պատրաստութենէ ետք, հակառակ դժուար պայմաններուն, հասաւ սպասուած օրը:

Շո՛ւտ, շո՛ւտ, չուշանա՛նք: Վերջին փորձերը պէտք է կատարել այսօր:

- Այո՛ մամ, պզտիկ մը ճերմակ գազակը մոռցած է, սենեակս կայ, հետդ կը բերե՞ս:

Այո՛, այս տեսակ մանրամասնութիւններէ ետք, յետմիջօրէի ժամը 4ին, ծնողք, բարեկամներ իրենց տեղերը գրաւեցին՝ սպասելով ձեռնարկի բացման:

Սրբազան հօր ժամանումէն ետք, սկառուները կատարեցին տողանցք մը, շեփորախումբի կշռոյթով: Քանի տարիէ կը դիտենք այս արարողութիւնը: Բայց կարծես միշտ առաջին անգամն է, այնքան կը յուզուինք: Այս երեխաները, Փարիզի տարբեր կողմերէն եկած, ամէն կիրակի, ծնողներու զոհաբերութեամբ (ոչ մէկ կիրակի հանգիստ ունին) անոնք կու գան աչքերը կը լեցուին:

Օրուան պատշաճ խօսքը փոխանցեց Թեմական Առաջնորդ Նորվան Արք. Զաքարեան: Անոր խօսքերը ուղղակի գրաւեցին մեր սրտերը, ուղղուած՝ սկառուներուն, ծնողներուն եւ Հ.Մ.Ը.Մ-ի մօտիկ բարեկամներուն:

Ապա սկառուները մեզ հրաւիրեցին ճոխ հիւրասիրու-

թեան: Ամբողջութեամբ պատրաստուած մայրերու կողմէ, որոնք իրենց սրտերը դրած էին կարկանդակներուն մէջ...

Վերջապէս մտանք սրահ... եւ մեր փոքրիկները մեզ տարին ծանօթ հայ բանաստեղծներու, գրողներու, երաժիշտներու եւ հերոսներու աշխարհը: Կարդացուեցաւ իւրաքանչիւր հեղինակի կենսագրութիւնը, ապա սկառուները երգեցին, արտասանեցին, վերապրեցուցին մեր մեծ մտաւորականներու շքեղ գործերը:

Երկինքի բոլոր աստղերը կը փայլէին երեխաներուն աչքերուն մէջ. անոնք այնքան հպարտ էին այս հանդէսը ներկայացնելուն համար:

Անշուշտ, ծնողները միշտ հպարտ կ'ըլլան իրենց զաւակներով: Սակայն ներկայ էին սկառու երեխաներ չունեցողներ եւս, որոնք նոյնպէս զմայլեցան ներկայացուած հանդէսով:

22 Մայիսին, Փարիզի Միխիթարեան վարժարանի պատերէն ներս ամբողջութեամբ հայերէն լեզուով ներկայացուած հանդէսը մակարդակ ունէր:

Ապրի՛ք Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի սկառուներ:

## ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՓԱԿՈՒՄ ԵՒ ԱՍՏԻՃԱՆԱՏՈՒՉՈՒԹԻՒՆ՝ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ

### Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի Սկառու. Խորհուրդ ԹՈՐՈՆԹՕ

**Կ**իրակի, 12 Յունիս 2011ին, Թորոնթոյի հայ երիտասարդական կեդրոնին մէջ խանդավառ եռուզեռ կար: Հ.Մ.Ը.Մ-ի սկառուական կազմը իր պատրաստութիւնները

կը տեսնէր տարեշրջանի փակման դրօշակի արարողութեան համար: Խմբապետները մեծ խանդավառութեամբ կ'առաջնորդէին կազմը՝ իրագործելու օրուան ծրագիրը:

Դրօշակակիրներու առաջնորդութեամբ խումբերը իրենց տեղերը գրաւեցին մարզադաշտին վրայ, ներկայութեամբ մեծ թիւով ծնողներու եւ համակիրներու: Մասնաճիւղի



խըմբապետուհի քոյր Սիրուն Թէլեան բացումը կատարեց, հրաւիրելով կազմը հնչեցնելու «Ով հայ արի» սկառուտական քայլերգը: Ապա, քոյրը շնորհաւորեց այն 12 խմբապետները, որոնք յատուկ դասընթացքի հետեւելով, արժանացած էին նախնական դարձանումի վկայագիրի: Քոյրը մաղթեց, որ անոնք իրենց իւրացուցած գիտելիքները ի գործ դնեն սկառուտական զանազան գործունէութիւններու ընթացքին:

Պահը հասած էր աստիճանատուչութեան: 10 ամիսներու հեւքոտ աշխատանքէ ետք, խմբապետական կազմէն 12 թեկնածուներ ստացան համապատասխան աստիճաններ: Միաւորի խմբապետներ՝ քոյր Նորա Սարգիսեան եւ եղբ. Տարօն Քէսքինեան, միանալով քոյր Սիրուն Թէլեանին, կատարեցին արարողութիւնը:

Խմբապետի աստիճան ստացան եղբայրներ Շանթ Հալլաճեան, Վարդան Քարկոցեան եւ քոյր Թամար Պողոսեան:

Փոխ խմբապետի աստիճան ստացան հետեւեալները.- Ալին Թոքաթլեան, Արամ Հալլաճեան, Քրիստին Մայտոսեան, Լիզա Պալուքեան, Գրիգոր Թէլեան, Նարայէլ Էղջու, Գաթիա Տէր Յովակիմեան, Թալին Մազեան եւ Ճօ Աւագեան:

Խմբապետի օգնականի աստիճան ստացան հետեւեալները.- Քրիստին Սարաֆեան, Լալա Ղարախանեան, Անոյշ Ղորղորեան, Կարօ Պէրէցեան, Միքայէլ Պողոսեան, Տիգրան Թոքաթլեան, Լորին Պիլէգիբեան, Նարէ Էղջու, Քրիստին Ներսէս, Բաֆֆի Աւաննէսի եւ Հայկ Մանուկեան:

Աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի Սկառուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Տանի Մարկորեան խօսք առնելով շնորհաւորեց բոլոր խմբապետները, որոնք պարտաճանաչօրէն հետեւեցան սկառուտական գործունէութեան եւ անխոնջ կերպով իրագործեցին դաստիարակչական իրենց ծրագիրները, միշտ ի մտի ունենալով Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանը՝ «Բարձրացիր-բարձրացուր»: Եղբ. Մարկորեան կարեւորութեամբ շեշտեց, որ այս աստիճանները խթան պիտի հանդիսանան, որ զանոնք ստացողները յաւելեալ աշխատանքով ու բժախնդրութեամբ յաջողութեամբ պսակեն Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր գործունէութիւնները, մաղթելով որ մասնաճիւղը սկառուտական մեծաթիւ ներկայութեամբ իրագործէ այս տարուան ամառնային իր բանակումը, Պոնիթա Կլէն բանակավայրին մէջ:

## ՄԱՀԱՁԳ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը կը գուժէ վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ական եւ աթլէթի յանձնախումբի տարիներու ատենապետ՝

### ԵՂԲ. ԳԵՈՐԳ ԳԱՐԱՊՈՅԱՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 20 Յունիս 2011ին:



Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային վարչութիւն ՊՈՒՐԾ ԶԱՄՈՒՏ

Ամէնքս էսպէս հիւր ենք կեանքում  
Մեր ծննդեան փունճ օրից,  
Հերթով գալիս, անց ենք կենում  
Էս անցաւոր աշխարհից:  
Անց ենք կենում... միայն անմահ  
Գործն է խօսում լաւ ու վատ.  
Ախ, երանի ով մարդ կը գայ  
Ու մարդ կ'երթայ անարատ:

### Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

**Ի**նչ բառերով բնորոշել եղբայր Գէորգին ազգօգուտ ներդրումը, հաւատարմութեամբ՝ իր սիրած «Բարձրացիր-բարձրացուր» գաղափարին, իր ընտանիքին հանդէպ սիրով, թէ՞ համեստ ու բարեպաշտ ընտանիքի մը պարկեշտ այս զաւակին շրջապատին հանդէպ զրուսելորած սիրով:

Եղբ. Գէորգ Գարապոյաճեան ծնած է Պէյրութ, 1939ին, ճրդ զաւակը Մովսէս եւ Մարի Գարապոյաճեան ամուլին: Աշակերտած է Հայ Աւետարանական Կեդրոնական Բարձրագոյն Վարժարանին, գոր աւարտած է 1958ին:

Հայկազեան համալսարանէն Պսակաւոր Արուեստից տիտղոսով վկայուած է 1963ին, իսկ Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական Ճեմարանէն՝ Պսակաւոր Աստուածաբանութեան տիտղոսով, 1967ին:

Իբրեւ ուսուցիչ, եղբ. Գէորգ տասը տարի ծառայած է զանազան վարժարաններու մէջ եւ 1989էն մինչեւ իր մահը վարած է ՔԱՀԼ-ի Լիբանանի հայ անկարներու կեդրոնին տնօրէնութիւնը:

Ամուսնացած է Աստղիկ Քիւրքճեանի հետ, 1968ին, եւ բախտաւորուած է երկու զաւակներով՝ Լիւսիլ եւ Հրայր:

# ԱՆՉՈՒԳԱԿԱՆ ՄՏԱՏԻՊԱՐԸ

(ԵՂԲ. ԳԷՈՐԳ ԳԱՐԱՊՈՅԱՃԵԱՆԻ ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

Պատանի հասակէն, 1950ական թուականներէն, եղբ. Գէորգ մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուսի մասնաճիւղի մեծ ընտանիքին: 1962ին ան փոխանցուած է Պուրճ Համուտի մասնաճիւղ: Իբրեւ աթլէթ մասնակցած է Լիբանանի ախոյեանութիւններուն: 1983-2001 մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան աթլէթի յանձնախումբին, իբրեւ անդամ, իսկ վերջին 13 տարիներուն՝ իբրեւ ատենապետ:

Եղբ. Գէորգ մեզմէ անվերադարձ բաժնուեցաւ 20 Յունիս 2011ին, մեզի ձգելով հաւատքի ճամբով իր սիրած հայրենիքին եւ միութեան համար գոհաբերուելու առաքելութիւնը:

Մահուան խորհուրդին ու անխուսափելիութեան շեշտակի նայողներուն համար անակնկալ մը չէր անոր անժամանակ կորուստը: Ան կ'արհամարհէր գալիք արհաւիրքը ու կը շարունակէր իր առօրեան, կարծէք ոչինչ պատահած ըլլար:

Ինչպէս բոլոր ժամանակներու մէջ ապրող ամէն մեծութիւն, եղբ. Գէորգին համայնքային եւ Հ.Մ.Ը.Մ.ական առօրեան եւս անմասն չմնաց ձախէն թէ աջէն եկող նենգ հարուածներէ: Սակայն, իր անխորտակելի կամքին յենած եւ բարութեան վստահած, ան ինքնախաբէութիւնը ապրեցաւ, թէ պիտի տոկար հարուածներուն, պիտի տոկար փոթորիկին ու հողմերուն:

Եղբ. Գէորգ կը հաւատար իր մայր հայրենիքի անկախութեան, եւ իր ներաշխարհին մէջ դրոշմուած մնաց այդ պատմական իրազործումը: Իր աննկուն հաւատքով ան հայասիրութիւն սերմանեց իր շրջապատին մէջ:



Հ.Մ.Ը.Մ.ական աթլէթի անբաժան զոյգը՝ Վարուժան Գեորգեան եւ Գեորգ Գարապոյաճեան:

Երկու զաւակներու հայրը կենսուրախ միջնորդութիւն մէջ առողջ դաստիարակութիւն կը ջամբէր իր զաւակներուն: Տարիներ ամբողջ պահպանուած ընտանեկան այս միջնորդութեան սակայն յանկարծ յուսալքութեան կը վերածուի, երբ իր հիւանդութիւնը կը սկսի գինք հիւծել:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի մեծ ընտանիքը երախտապարտութեամբ պիտի յիշէ եղբ. Գէորգին ծառայութիւնները եւ վաստակաշատ ներդրումը, մանաւանդ՝ աթլէթի մարզին, որպէս երկար տարիներու ատենապետ: Միութիւնը պիտի չմոռնայ նաեւ եղբոր երկարամեայ ծառայութիւնները իրեն շատ սիրելի Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղին:

Ան ներկայ կը գտնուէր, ի պաշտօնէ եւ հրաւերներով, Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական բազմաթիւ ժողովներուն, ուր շինիչ գաղափարներ կ'արտայայտէր ի նպաստ իր պաշտած միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ին:

Բազմազան են եղբ. Գէորգին մատուցած ծառայութիւնները: Յիշելու համար զինք, անունին դիմաց պէտք է կանգ առնենք, խորունկ թափանցելով՝ վերջիչենք իր կեանքին անցած ճանապարհը եւ բանաստեղծին նման հարց տանք...



Եղբ. Գեորգ աթլէթի յանձնախումբի պատասխանատուներու հետ:

**Կեանքէն ինծի ի՞նչ մնաց,  
Ի՞նչ որ տուի ուրիշին,  
Տարօրինակ, ա՛յն միայն...**

Մեզմէ մէկիկ-մէկիկ բաժնուող սերունդը իր գործը աւարտած՝ կ'երթայ այս աշխարհէն, բայց կը ձգէ բաց մը, որ հետագային ոչ մէկ սերունդ ի վիճակի պիտի ըլլայ լրացնելու: Անհետացող սերունդը իրեն հետ կը տանի պատմական մեր յիշողութիւնը, որ փաստագրական տուեալներէ աւելի մեծ նշանակութիւն ունի մեզի համար:

Նկարագրելով անոր յատկութիւններն ու շեշտուած հայրենասիրութիւնը, պէտք է նկատի առնել եղբօր անբասիր նկարագիրը, բարի ու հայրենասէր ոգին, հարցերը յատուկ կերպով դիտելու մօտեցումը, գաղտնապահութիւնը եւ եսասիրութենէ ու ինքնագովութենէ հեռու մնալու Հ.Մ.Ը.Մ.ականի իր տիպարը:

Եղբ. Գէորգ Նոյեմբեր 2008ին Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան կողմէ պարգեւատրուեցաւ «Ծառայութեան» շքանշանով:

Քիչերու վիճակուած է առաքինութեամբ ապրիլ ու առաքինութեամբ մեռնիլ: Եղբ. Գէորգ այս աշխարհէն բաժնուեցաւ՝ տալով իր կարելին: Ան մեր յիշողութեան փոխանցեց ազգային իտէպի մտածումը, զոր մեր կարգին պիտի փոխանցենք սերունդէ սերունդ:

ՔԱՀԼ-ին ունեցած իր մեծ ներդրումին կողքին, կը յիշենք 1989ին, «Տեղեկատու» ամսաթերթի հրապարակումը 1200 տպաքանակով:

Եղբ. Գէորգ հանրածանօթ էր իր եռահատոր «Բնութեան գործերը» գիրքերով, լուսանկարչական ոսպնեակէն դիտ-



լած, Գարապօ ստորագրութեամբ: Ան իր լուսանկարներու ցուցահանդէսներու դրական արդիւնքներուն մասնակից կը դարձնէր հայ ծերունիները:

Շատ մը այլ հետաքրքրութիւններու կողքին, ան սիրած էր լուսանկարչութիւնը եւ վերջին տասը տարիներուն զարգացուցած էր այդ նախասիրութիւնը՝ արդիական ոճով նկարահանումներ կատարելով:

Այս աշխատանքներու կողքին միշտ պիտի յիշենք իր հեղինակութեամբ իրագործուած թուշնագիր «Գիրք ժողովողի»ն: Կայ նաեւ հիմնադրամի ձեռնարկը, որ կը նպատակադրէր ապահովել նիւթական գոյատեւումը ՔԱՀԼ-ին, որուն համար ան սրտանց աշխատեցաւ՝ պարտն ու պատշաճը կատարելով:

Եղբ. Գէորգ քիչ աշխատանք չտարաւ ծերունիի մը որդեգրման եւ «365 օրերէն օր մը հայ ծերանոցին» ծրագիրին յաջողութեան համար:

Այս բոլորը իրականացնելէ ետք, ան միշտ եղած է պարտաճանաչ ու երախտապարտ, իւրաքանչիւր նուիրատուի, իւրաքանչիւր աջակիցի եւ իւրաքանչիւր նեցուկ կանգնողի յայտնելով իր խորին շնորհակալութիւնները:

«Օտարներու կողմէ մշակուած եւ հայերուն նուիրուած գեղեցիկ պարտէզի մը նման է ծերանոցը», կ'ըսէր ան:

Վարձքը կատար, սիրելի՛ եղբայր, քեզ գրկող հողը թեթեւ գայ յոգնատանջ ուսերուդ:

Խոնկ ու մոմ՝ անթառամ յիշատակիդ:



## ԵՂԲ. ՎՐԷՓ ՖՈՒՃՈՒՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

**Հ.Մ.Ը.Մ.ական եղբայր մը  
ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏ**



**Խ**որ կակիծով եւ մեծ վիշտով իմացանք եղբ. Վրէժ Ֆուճուրեանի մահուան բօթը, 20 Յունիս 2011ին:

Տաքարիւն բնաւորութեամբ, հեզ եւ աշխատասէր Հ.Մ.Ը.Մ.ականի արժանապատուութիւնը ամէն բանէ վեր դասող եղբ. Վրէժ չորս տարեկանէն անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի գայլիկական խումբին՝ մինչեւ պատանեկութիւն:

Մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի պասքեթպոլի խումբերուն, որմէ ետք անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ի պասքեթպոլի ներկայացուցչական խումբին՝ մասնակցելով խումբին երկրէն դուրս կատարած մրցումներուն: Եղած է Հ.Մ.Ը.Մ.ի

աթլէթի փայլուն աստղերէն, բարձրութիւն ցատկելու, մէկ քայլ ոստումի, ինչպէս նաեւ մարաթոնի վազքի ախոյեան: Ապա, եղած է մարզիչ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի մասնաճիւղի պասքեթպոլի խումբերուն: Եղբ. Վրէժ գործած է հանգուցեալ եղբայրներ Վարուժան Գէորգեանի եւ Գէորգ Գարապոյաճեանի հետ:

Գործի ասպարէզի բերումով, հեռաւոր երկիր գտնուելով, ան միշտ կապ հաստատած եւ հետաքրքրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի խումբերով:

Վստահ եղիր, եղբայր Վրէժ, որ տակաւին Հ.Մ.Ը.Մ.ը կայ ու պիտի մնայ առ յաւէտ, որովհետեւ միշտ կան ու պիտի ըլլան քեզի պէս անձնուէր Հ.Մ.Ը.Մ.ականներ, որոնք գործեցին անշահախնդիր կերպով՝ բարձր պահելու համար միութեան փառքն ու պատիւը: Յարգանք քու անթառամ յիշատակիդ:

*'Made from one single slice  
of natural Australian opal'*



**Classique**  
OPAL DIAL WATCH

*Sarkis Der Bedrossian*

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.  
123 Clarence Street  
Sydney 2000  
Australia*

Phone: +61 2 9290 2199

fax: +61 2 9262 1630

Website: [www.classiquewatches.com](http://www.classiquewatches.com)

Email: [Info@classiquewatches.com](mailto:Info@classiquewatches.com)

# ՏԻԳՐԱՆ ՄԵԾ

Պատրաստեց՝ Շաղիկ Գեորգեան  
ՊԵՅՐՈՒԹ



**Տ**

իգրան երկրորդ թագաւորը Արտաշէսեան այն թագաւորներէն է, որուն օրով Մեծ Հայքի թագաւորութիւնը կը հասնի իր հզօրութեան գագաթնակէտին: Անոր համար ալ գայն կը կոչեն Տիգրան Մեծ:

Ան թագաւորած է Ք.Ա. 95-55 թուականներուն: Իր թագաւորութեան շրջանին, Հայաստանի տարածութիւնը կը հասնէր Կասպից ծովէն մինչեւ Միջերկրական ծով, Կովկասեան լեռներէն մինչեւ Միջագետքի անապատները: Ահա թէ ինչպէս Մովսէս Խորենացի կը նկարագրէ Տիգրան մեծը.-

«Տիգրանը հայոց թագաւորներէն ամէնէն հզօրն է, ամէնէն խոհեմը եւ ամէնէն քաջը: Իր բացառիկ արիութեամբ ու քաջութեամբ ան կը բարձրացնէ հայոց ազգի յարգն ու պատիւը, եւ հայոց ազգը, որ մինչ այդ օտարներու լուծին տակ կը հեծէր, կը դառնայ օտարներու վրայ գերիշխող եւ հարկապահանջ: Ան կը լիացնէ հայոց

աշխարհը ոսկիով եւ արծաթով, թանկարժէք քարերով, շքեղ ու գունազեղ զգեստներով: Անոր օրով հայոց հետեւակ մարտիկները կը դառնան ճիւղեր, պարսաւորները՝ դիպուկ աղեղնաւորներ, մահակաւորները կը զինուին սուրերով ու տէգաւոր նիզակներով, անգրահ մարտիկները կը վահանաւորուին ու կը զրահաւորուին:

«Ան խաղաղութիւն, շէնութիւն, լիութիւն բերաւ հայոց աշխարհին: Տիգրանը խարտեաչ, գանգրահեր տղամարդ էր՝ գունեղ երեսով, մեղմահայեաց, թիկնեղ եւ վայելչակազմ, ուտել խմելու մէջ պարկեշտ էր ու չափաւոր, խրախճանքներու մէջ՝ օրինաւոր: Իբրեւ թագաւոր՝ արդարամիտ էր, արդարադատ, հաւասարակշռուած, ոչ լաւագոյններուն կը նախանձէր, ոչ նուաստները կ'արհամարհէր»:

# ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ

## ՆՈՒԻՐՈՒԱԾ ՕՓԵՐԱՆԵՐ

**Տ**

այ ժողովուրդի մեծագոյն թագաւորներէն Տիգրան Մեծի մասին գրուած են 60է աւելի օփերաներ՝ հայ թէ օտար աշխարհահռչակ երաժիշտներու կողմէ: Իտալացի հանճարեղ երաժիշտ Անթոնիօ Վիվալտի Պենետեթօ Միկելիի եւ Նիքոլա Ռոմալտիի հետ գրած է «Սիրուն եւ ատելութեանը գերիշխող բարե-

գործը կամ Տիգրան Մեծ» օփերան: Օփերային առաջին եւ երրորդ գործողութիւնները գրած են Միկելիին եւ Ռոմալտիին: Սակայն, դժբախտաբար, անոնք մեզի հասած չեն: Մեզի հասած է միայն Վիվալտիի կողմէ գրուած երկրորդ գործողութիւնը: Առաջին անգամ այդ օփերան կատարուած է Հռոմի մէջ, 1724 թուականին, դիմակահանդէսի մը ժամանակ:



Տիգրան Մեծին նուիրուած օփերաներ գրած են անլանի երաժիշտներ Ա. Սքարլաթթին, Գ. Կլուկը, Տ. Ալպիոնին եւ ուրիշներ:







# ՉՐՈՎ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՑՆԵՐ

**Տ**իգրան Մեծ իր թագաւորութեան տարիներուն կառուցած է չորս քաղաքներ, որոնք իր անունով կոչած է Տիգրանակերտ: Այդ քաղաքներէն միակը, որուն տեղը ճշգրտօրէն պարզուած է, Արցախի մէջ կառուցուած Տիգրանակերտ քաղաքն է: 2006-2008 թուականներուն այնտեղ կատարուած են պե-

ղումներ, որոնց իբրեւ արդիւնք յայտնաբերուած են քաղաքի միջնաբերդի պարսիպներուն մէկ հատուածը, ամրացուած թաղամասի պարիսպներուն ժայռափոր հիմերը, կեդրոնական թաղամասի տաճարին մէկ հատուածը եւ այլն: Քաղաքը հիմնականին մէջ կառուցուած է ճերմակ կրաքարով:

## ԱՐՄԵՆԻԱ ԱՆՈՒՆՈՎ ՔԱՂԱՔՆԵՐ ՈՒ ՓՈՂՈՑՆԵՐ ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԱԾՔԻՆ



**Բ**ոլորս ալ գիտենք, որ օտարները մեր երկիրը՝ Հայաստանը կը կոչեն Արմենիա: Արմենիա անունով բազմաթիւ տեղանուններ կան աշխարհի գանազան երկիրներու մէջ: Քոլումպիոյ մէջ Արմենիա անունով քաղաք մը կայ: Ան հիմնուած է 19րդ դարուն, հայ գաղթականներու ջանքերով: Ունի շուրջ 100.000 բնակիչ: Յայտնի է «Արմենիա» անունով սուրճի իր տեսակով:

Արմենիա անունով փոքր քաղաքներ կան Հարաւային Ամերիկայի կարգ մը երկիրներու մէջ, ինչպէս՝ Հոնոլուլուա եւ Սալվատոր: Արմենիա անունով քաղաք մը կայ Միացեալ Նահանգներու Ուիսքոնսին նահանգին մէջ: Արմենեւրտատ եւ Ար-



մենալ անունով քաղաքներ կան Ռումանիոյ մէջ: Մօտ երեք հարիւր տարի առաջ Խրիմի մէջ հիմնուած է Արմեանսք քաղաքը, ուր կառուցուած են բերդեր եւ մատուռներ: Քաղաքը յայտնի է Արմեանսքի բազար անունով: Պուլկարիոյ մէջ կան բազմաթիւ գիւղեր հայկական անուններով՝ Էրմենքեւօ, Էրմենսքոյ, Էրմենլուի, Արմենիթէ, Էրմենիքոյ: Արմենիէս սթրիթ կը կոչուի Հնդկաստանի Կալկաթա քաղաքի պողոտաներէն մէկը: Արմենիա անունով փողոցներ կան բազմաթիւ երկրներու մէջ: Այս բոլորը ցոյց կու տան աշխարհասփիւռ հայութեան հոգեկան արիւթիւնը եւ հայրենիքը սրբացնելու եւ իր մէջ կրելու անընկճելի կամքը:



## Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

## ՍՈՒՏՈՔՈՒ

	2		4		7		8	
	3			8			6	
8		7				4		5
			6		5			
9		6		7		1		3
			1		4			
7		1				2		6
	5			4			3	
	8		2		6		9	

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւնակներով (9x9) կազմուած գծացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշուող 9 բաժիններէ (3x3): Բացառումի սկզբունքին կիրարկուելով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը գետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւնակ եւ 9 քառակուսիի մէջ իւրաքանչիւր բաժին ունենայ 1-9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով, ոչ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար, կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ գետեղուած են:

### Նախորդին լուծումը

4	9	1	2	6	8	3	7	5
6	7	3	4	5	9	2	8	1
8	2	5	7	3	1	9	4	6
7	4	6	3	8	5	1	9	2
2	1	8	6	9	7	5	3	4
5	3	9	1	4	2	8	6	7
1	8	7	9	2	4	6	5	3
3	5	4	8	1	6	7	2	9
9	6	2	5	7	3	4	1	8

Պատասխանը՝ յաջորդիւ

### ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Գրիգոր Լուսավորիչ հո'ն ձեռնադրուեցաւ:
2. Ստուգապէս - Երկբարբառ մը:
3. Զօրաբարէլի որդին - Ազնուականի տիտղոս:
4. Շաղկապ - Տառի մը դրացիները - Իրերայաջորդ գիրեր:
5. Սերպ թենիսմէն:
6. Եղեգնացուպ - Ծառի կոծղ - Չոր:
7. Յատկութիւն - Թշուառ - Նշանաւոր որկրամուր:
8. Առանձնակեաց - Մեծ մայր - Ստացական ածական:
9. Նաղմ - Բաժանուածի գիծ - Մէկը:
10. Վարչական դրուութիւն:
11. Թուղցիկ - Իրաքեան լրատու գործակալութիւն:
12. Ապականութիւն - Աչք - Ճատրակի անուանի հնդիկ վարպետ - Յուցական ածական:
13. Այբուբենէն - Բոսոր - Նաեւ - Ստացական ածական:
14. Մէկ հատ - Հայ նահապետ:
15. Սպասէ՛ - Երնէ՛կ:
16. Ափսոսա՛ - Արաբական թերակղզի - Ոտք:
17. Խօսքի մասերէն - Ռոմի Շնայտրրի ֆիլմերէն - Դե՛հ:
18. Սպարապետ - Ճուռակ, գիշատիչ թռչուն:
19. Այբուբենէն - Ունայն - Սփռէ՛:
20. Արդարեւ - Աղանիի տեսակ - Քրիստոսէ առաջ:

### ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Հայաստանի ֆուլթպոլի ազգային հաւաքականին բերդապահ:
2. Հայկական աղօթագիրք - Ժապաւէն - Իշխանաւոր:
3. Տաղաչափեալ քերթուած - Շտեմարան, մթերանոց:
4. Վանաձորի նախկին անունը - Պատկառանք:
5. Մկրտիչ Արմէնի երկերէն - Եւրոպական հանրապետութիւն - Իգական օտար անուն:
6. Եւրոպական օդանաւային ընկերութիւն մը - Գրեանական պիտոյքներէն - Անգոյգ:
7. Պատսպարան - Արաբական օդանաւային ընկերութիւն մը:
8. Այբուբենէն - Դպիր - Արեւելեան խաղ մը:
9. Համադասական շաղկապ - Անորոշ դերանուն - Արական օտար անուն - Անձնական դերանուն:
10. Քայլաչափ - Անդարձագիր - Վեստգոթերու թագաւոր - Ռուսերէն՝ այո՛:
11. Բերդ - Միջնաբերդ - Կապտագոյն հոտաւէտ ծաղիկ:
12. Չար ոգի - Գումարտակ - Հռոմէական դիցունհի - Տարածքի միաւոր:
13. Գրաբար՝ հասկցի՛ր - Ուրուական - Պաղի - Սանասարի ձայնեղ որդին:
14. Փորձանք - Յուցական ածական - Նզովք:
15. Նոյի որդիներէն - Պարսաւ - Պետրոս Դուրեանի քերթուածներէն:

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1														
2														
3														
4														
5	↓													↗
6														
7														
8														
9														
10														
11														
12														
13														
14														
15														
16														
17														
18														
19														
20														

ԹԻՒ 193 ԽԱՉԲԱՌԻ ԼՈՒՑՈՒՄԸ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1		Ն	Ի	Ի	Ե	Ո	Ր	Ք	Ն	Ի	Ք	Ս		
2		Ժ	Ա	Մ		Կ	Ր	Ե	Ս	Ո	Ս			Ա
3		Ո	Ի	Ա	Թ	Բ	Ն	Ա	Պ	Ա	Շ	Տ		
4		Ջ	Ա	Ն	Ա	Կ		Ա	Կ	Ա	Հ			Ա
5	Մ	Ա	Լ	Է	Ջ			Կ	Յ	Ա	Մ	Ր		
6	Խ	Ն	Ա	Մ		Տ			Ա	Հ		Կ	Ի	
7	Ա	Ն	Կ	Ո	Լ	Ա			Ն	Ա	Ջ	Ե	Լ	Ի
8	Լ		Ո	Ի		Թ			Ս	Լ	Ա	Ք		
9		Ա	Տ	Ր	Ն	Ե	Ր	Ս	Ե	Հ	Ա	Ն	Խ	
10	Ո	Յ		Ի	Ի				Պ	Ա	Ն	Ռ	Թ	
11	Ս	Պ	Ա	Ն	Ի	Ա			Ի	Տ	Ա	Լ	Ի	Ա
12	Պ		Լ	Ի	Ր	Բ			Ե	Լ	Ք		Ն	
13		Ռ	Ի	Օ		Ր			Շ	Ա	Ե	Ջ		
14	Ռ	Ի	Ք		Շ	Ա	Հ		Ռ	Ո	Ն	Ա	Լ	Տ Օ
15	Ո	Վ		Ս	Ա	Հ	Ա	Կ					Ա	Ր
16	Խ	Ի	Ս	Տ	Ա	Շ	Ի	Լ			Ա	Ր	Ի	
17		Ե	Ղ	Ե	Ա	Մ		Ջ	Ի		Ս	Ա	Ն	
18	Ա	Ր	Ո	Ի	Ե	Մ		Ն			Ի	Ն	Ա	
19	Հ	Ա	Յ		Ռ	Ա	Ն	Ի	Ա		Ա	Ն	Կ	Կ
20	Ա		Ի	Ք	Ա	Ն	Ա	Լ		Բ	Լ	Շ	Ա	Կ

**ՓԵՐՈՒԻ ՅՈՒԹՊՈՒԼԻ ԱԶԳԱՅԻՆ**

**ԽՈՒՄԲԻ ՄԱՐԶԻԶ՝**

**ՍԵՐՃԻՑ ՄԱՐԳԱՐԵԱՆ**

